

ՄԱՌ ՄԻՋՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ  
ԱՐԽԻՎԱՑԻՆ ՎԱՐՋՈՒԹՅՈՒՆ

---

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Գ Ր Ա Կ

II

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
Թ ՈՒՐ Գ Ի Ս Ց ՈՒ Մ  
(1941—1943 թ. թ.)

ՀԱՅԳԵՏՀՐԱՑ





9(43)

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ  
ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ  
ՓԼԱՏԱԹՂԹԵՐԸ**

ՊԵՐԱԿ II

**ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ  
(1941—1943 թ. թ.)**



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Յ

Ր Ե Վ Ա Ն


1947

**Документы министерства  
иностранных дел Германии**

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1947

Ներկա ժողովածուն բովանդակում է ՍՍՌ Միության Արտաֆին գործերի մինիստրության Արխիվային վարչության սրամադրության չափ զսնվող գերմանական Ա.Գ.Մ այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են գերմանական ֆադաֆականությանը Թուրքիայում 1941—1943 թ. թ.։ Փաստաթղթերը սրված են գերմաներենից կատարված թարգմանությամբ։





ՊԱՊԵՆԸ — ՌԻԲԲԵՆՏՐՈՊԻՆ

Գ ա ղ ճ Ե

ՀԵՌԱԳԻՐ

Անկարա, 14 մայիսի 1941 թ.

Ստացված է 14 մայիսի 1941 թ. 20 ժ. 22 բ.

№ 552

ՀՈՒՅԺ ՇՏԱՊ

№ 1523-ով հանձնված է

հատուկ դնացքի մայիսի 14-ին

Արտաքին գործերի ռայխսմինիստրին

Մի ժամվա ունկնդրությունը պրեզիդենտի մոտ անցավ ամենասրտագին, իրադրության մեջ: Նա ինձ հանձնառարեց հայտնել ֆյուրերին, որ նամակի բովանդակությունը իր վրա մեծ տպավորություն է թողել և որ ինքն ամբողջությամբ ընդունում է այն վստահությունն ու բարեկամ մտայնությունը, որոնցով շնչում են այդ տողերը:

Զրույցի արդյունքների մասին ավիացիայի կապիտան Նեյնը մանրամասն հաշվետվություն կբերի:

Պրեզիդենտը պատրաստ է նախկին բարեկամական հարաբերությունների վերականգնումը ապահովող պայմանագիր կնքել: Նա ասաց, որ եթե Գերմանիան պատրաստակամություն հայտնի ոչ մի երկրի հետ Թուրքիայի դեմ ուղղված համաձայնագիր չկնքել, ապա Թուրքիան պատրաստ է իր վրա պարտավորություն վերցնել երբեք ոչինչ չձեռնարկել Գերմանական շահերի դեմ և կոնֆլիկտի մեջ չմտնել Գերմանիայի հետ: Անգլո-թուրքական պայմանագրի պարտավորություններին հակասելու վերաբերյալ նա



հայտարարեց. «Քանի որ կա ցանկութիւն, ապա կգտնվի նաև ձևակերպում»։ Բանակցութիւններն արտաքին գործերի մինիստր Սարաջօղլուի հետ անհապաղ պետք է սկսվեն։

Սրա հետևանքով ռազմական նյութերի տրանզիտը ղեպի Իրաք կարելի է ապահովված համարել։

ՊԱՊԵՆ

ՌԻՖԲԵՆՏՐՈՊԸ—ՊԱՊԵՆԻՆ

Գ ա ղ Տ Ե Ի

ՀԵՌԱԳԻՐ

Ֆուշի, 16 մայիսի 1941 թ. 18 ժ. 40 ր.  
Ստացված է 16 մայիսի 1941 թ. 19 ժ. 00 ր.  
Արտաքին գործերի մինիստրության  
(Բեռլին) միջոցով

Անկարա  
№ 388

Անձամբ դեսպանին

Նախքան մենք կիրադործենք Թուրքիայի հետ պայ-  
մանագիր կնքելու միտքը, մի պայմանագիր, որը կազա-  
տեր այս երկիրն Անգլիայի հետ նրան մինչև այժմ կապող  
հարաբերություններից և մեծ կամ փոքր չափով նրան  
կգրավեր դեպի մեր բանակը, անհրաժեշտ է դեռ ուսում-  
նասիրել այն հարցը, թե սրանով մենք մեզ չենք ենթա-  
կում՝ արդյոք Թուրքիայում ներքաղաքական խռովություն  
ծագելու վտանգին, ինչպես այդ վերջերս տեղի ունեցավ  
Նոյակ պակտին Հարավսլավիայի միանալուց հետո: Մեզ չեն  
սկսառնում արդյոք անսպասելի սյուրպրիզներ պետական  
հեղաշրջման կամ որևէ նման բանի միջոցով պրեզիդեն-  
տին և ղեկավար մինիստրներին հեռացնելու ձևով: Ծա-  
խնդրում եմ Ձեզ, հեռագրով մանրամասն հաղորդել Ձեր  
կարծիքն այս հարցի վերաբերյալ, բնութագրելով ընդհա-  
նուր ներքաղաքական դրությունը Թուրքիայում և գոյություն  
ունեցող պետական ղեկավարության կայունությունը—  
նույնպես և այն նոր արտաքին քաղաքական կողմնորոշ-  
ման դեպքում, դեպի որը մենք ձգտում ենք:

ՌԻՖԲԵՆՏՐՈՊ

Հաղորդված է Անկարա  
№ 471-ով 16 մայիսի 20 ժ. 10 ր.

# ՌԻՖԲԵՆՏՐՈՊԸ—ՊՍՊԵՆԻՆ

Գ ա ղ Տ Ե Լ

## ՀՆՈՍԳԻՐ

Փոռլ, 17 մայիսի 1941 թ. 1 ժ. 55 ր.

Ստացված է 17 մայիսի 1941 թ. 2 ժ. 50 ր.

№ 393

Անկարա

ՀՈՒՅԺ ՇՏԱՊ

Անձամբ դեսպանին

Մայիսի 13-ի և 14-ի Ձեր հաղորդագրություններում այն դրությամբ մասին, որին Դուք հանդիպել եք այնտեղ Ձեր վերադարձից հետո, ես գտա այն բանի հաստատումը, թե այժմ հասել է մոմենտը Թուրքիայի հետ համաձայնության գալու։ Ընդ սմին ես կարծում եմ, որ մենք պետք է օգտագործենք Ձեր հաղորդագրության մեջ նկարագրված դրությունը և Թուրքերի հետ մի քիչ է՛լ ավելի հեռու գնանք, քան մեր կողմից այդ մինչև այժմ նախատեսվում էր։ Ի լրումն Ձեզ արդեն այստեղ տրված բանավոր ցուցումների, ես խնդրում եմ Ձեզ այնտեղ նախնական բանակցություններ վարել այնպիսի եղանակով, որ մենք հետևյալ արդյունքներին հասնենք.

Թուրքիայի հետ պաշտոնական պայմանագիր կնքելու հետ միաժամանակ մի գաղտնի պայմանագիր կկնքվի, որը մեզ թույլ կտա անսահմանափակորեն զենք և ռազմանյութեր փոխադրել Թուրքիայի վրայով։ Ընդ սմին պետք է լինեն համապատասխան ձևով սահմանել, որ Թուրքիան չի առարկի այն բանի դեմ, որ փոխադրության ժամանակ ալլա



ռազմանյութերին ուղեկցեր անհրաժեշտ անձնակազմ: Գործ-  
նականորեն սա հավասարազոր կլիներ քողարկված ձևով  
զորքերի որոշ քանակ փոխադրելու թույլտվություն ստա-  
նալուն: Եթե մենք ուղեկցող անձնակազմով ռազմանյութեր  
և զենք փոխադրելու նկատմամբ Թուրքիայի կողմից պատ-  
րաստակամության հանդիպենք, ապա նրան կարելի կլինի  
խոստանալ ուղղել սահմանն Ադրիանապոլսի մոտ մի չա-  
փով, որը դեռ պետք է սահմանվի, ինչպես և թերևս, այս  
կամ այն կղզին էգեյան ծովում: Հասկանալի է, որ այս-  
տեղ խոսքը ոչ միայն փոքրաքանակ ռազմանյութերի մա-  
սին է, ինչպես օրինակ, Իրանին զենք մատակարարելու  
վերաբերյալ պարտավորություններից բղխող փոխադրում-  
ների մասին, և այլն, այլ նաև ավելի զգալի փոխադրում-  
ների մասին, ըստորում նրանց չափերի որոշումը պետք է  
վերապահված լինի մեզ: Այս մասին ոչ մի անորոշություն  
չպետք է լինի:

Հարկավոր է ևս նշել, որ միայն և միմիայն նյութերի  
տրանզիտը միջազգային իրավունքի սովորական կիրառման  
համաձայն լիովին համատեղելի է պետություն չեզոքության  
հետ, այնպես որ այս տեսակետից պայմանադրային ձևա-  
կերպումը, հավանորեն, ձեռք կբերվի առանց առանձին  
դժվարությունների: Ուղեկցող անձնակազմ թույլատրելու  
վերաբերյալ համաձայնության ֆիքսացիայի ձևը կարելի  
կլինի հեշտությամբ գտնել, որչափով թուրքերը պատրաստ  
են համապատասխան համաձայնություն կնքել և այդ հա-  
մաձայնությունը կենսագործել մեր ցանկությունների հա-  
մեմատ:

Այսպիսի ուղին թուրքերին հնարավորություն կտա ի-  
րենց դեմքը պահպանել Անգլիայի նկատմամբ: Այն որոշ  
փափկանկատությունը, որը նրանք կարող են ցուցաբերել,  
կարելի կլինի վերացնել հետևյալ փաստարկով:

Թուրքիան Անգլիայի ու Ֆրանսիայի հետ մի պայմա-  
նագիր է կնքել, որը հիմնված է որևէ վտանգի դեպքում  
միմյանց փոխադարձ օգնություն ցույց տալու պարտավոր-



դուժյան վրա: Ֆրանսիան ջախջախված է, իսկ Անգլիան  
ընդհանրապես այլևս ի վիճակի չէ Ռուսքիային որևէ օգ-  
նություն ցույց տալ: Դեռ ավելին, պայմանավորված կող-  
մերից մեկը, այսինքն Ֆրանսիան, արդեն այժմ կտրուկ  
շրջադարձ է կատարում դեպի մեր կողմը: Այսպիսով,  
նախկին թուրք-անգլո-ֆրանսիական պայմանագիրն ինչպես  
իրավաբանորեն, այնպես էլ գործնականորեն կորցրել է իր  
ոտքի տակի հողը: Ես Ձեզ խնդրում եմ Ձեր բանակցու-  
թյունների ժամանակ այս բանը պարզաբանել թուրքերին:

Որ թուրքերն ուզում են իրենց դեմքը պահպանել ան-  
գլիացիների հանդեպ, — միանգամայն հասկանալի է: Այդ  
պատճառով մենք կարող ենք առանց ուշացնելու պաշտո-  
նական պայմանագրին համապատասխան ձև տալ: Իսկ որ  
Թուրքիան ինքնապահպանման նպատակով, առանձնապես  
այժմ, երբ Անգլիան ընդհանրապես ի վիճակի չէ նրան  
որևէ աջակցություն ցույց տալ, ստիպված է իրեն ապահո-  
վել երևակայական գերմանական և իրական ռուսական  
վտանգի դեմ, — այդ հասկանալի կլինի ամբողջ աշխարհին:  
Իր այսպիսի պաշտպանությունը Ռուսաստանից Թուրքիան  
կարող է ձեռք բերել մեզ հետ բարեկամության համաձայ-  
նություն կնքելու միջոցով: Քանի որ բարեկամության հա-  
մաձայնություն կնքելու համար միակ պայմանը հանդիսա-  
նում է ուղեկցող անձնակազմով ռազմանյութերի տրան-  
զիտի թուլլատրումն արաբական ժողովուրդներին, ինչպես,  
օրինակ, Իրաքին պաշտպանելու համար՝ անգլիական հար-  
ձակումներից կամ թե պայմանագրերի խախտումից, ապա  
ամեն մեկին, ով կպնդի, թե Թուրքիան կորցրել է իր դեմ-  
քը, վերջինս կարող է ծանրակշիռ փաստարկներ հակա-  
դրել:

Ես Ձեզ խնդրում եմ, Ձեզ այստեղ տրված բանավոր  
ցուցումների համաձայն, վերև շարադրված հիմնական  
դրույթներն որպես հիմք ընդունելով, այժմ ևեթ բանակ-  
ցությունների մեջ մտնել թուրքական կառավարության  
հետ՝ պայմանագիր կնքելու մասին: Ես խնդրում եմ այս

նախնական բանակցությունները վարել միայն բանավոր և առայժմ խուսափել պայմանագրի նախագիծը հանձնելուց կամ դրավոր ձևով նրա որևէ այլ ֆիքսացիայից։ Այս հարցի վերաբերյալ հետագա ցուցումների հնարավորությունը թողնում եմ ինձ՝ մինչև Ձեզանից հաղորդագրություն ստանամ՝ Ձեր բանավոր բանակցությունների արդյունքների մասին։

Մենք շահադրդոված ենք, որ որքան կարելի է շուտ ավարտենք այս գործը։ Ուստի ես Ձեզ խնդրում եմ այժմ ևեթ բանակցությունների մեջ մտնել և տեղյակ պահել մեզ։ Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծերն ես անհապաղ կուղարկեմ Ձեզ։

ՌԻԲԲԵՆՏՐՈՊ

Նշագրում.

Հաղորդված է Անկարա № 476-ով

17 մայիսի 4 ժ. 35 ր.

ՌԻՖԲԵՆՏՐՈՊԸ—ՊԱՊԵՆԻՆ

Գ ա ղ ս Ե ի

ՀԵՌԱԳԻՐ

ՀՈՒՅԺ ՇՏԱՊ

Ֆուշլ, 19 մայիսի 1941 թ.

Ստացված է 19 մայիսի 1941 թ. 2 ժ. 30 ր.

№ 405

Հաղորդված է Անկարա № 485-ով

19 մայիսի 1941 թ.

Անձամբ դեսպանին: Ի պատասխան մայիսի 17-ի  
№ 569 հեռագրին:

Ուշադրության պնդելով Ձեր հաղորդագրությունը, ես  
համաձայն եմ, որ Դուք թողնեիք մայիսի 17-ի № 476 իմ  
հեռագրական կարգադրության մեջ մատնանշված հիմունք-  
ներով Թուրքիայի հետ պայմանագրի կնքում ձեռք բերելու  
փորձերը: Եթե, ինչպես ես հասկանում եմ Ձեր հեռագրից,  
տեղումդ գոյություն ունեցող դրությունը թույլ չի տալիս  
հենց այժմ միանգամից անհրաժեշտ հետևանքների հասնել,  
ապա մենք պետք է փորձենք այս բանին հասնել մի քանի  
նվազով, որոնցից առաջինը պետք է լինի պայմանավորվա-  
ծությունն այն գծով, որպիսին մենք այստեղ բանավոր  
կերպով քննարկել էինք: Ես խնդրում եմ այս իմաստով  
անհապաղ բանակցություններ սկսել թուրքական կառավա-  
րության հետ, ընդամենը, սակայն, ուշադրություն դարձնելով  
ևս հետևյալ կետերի վրա.

1. Կարևոր է, որ ցանկալի պայմանագիրն այժմ կրնա  
լի հնարավորության չափով շուտի ձեռք որ մենք ստա-



նրանք Ձեր հաղորդագրությունը Ձեր նախնական բանակցությունների արդյունքների մասին, Դուք այստեղից կստանաք պայմանագրի նախագիծն՝ այն թուրքական կառավարությանը հանձնելու նպատակով: Ձեր առաջարկություններն այս հարցի առթիվ խնդրում եմ հեռագրեք:

2. Ծրագրվող պայմանագրում մեզ համար վճռականը Թուրքիայի վրայով ռազմանյութերի տրանզիտի հնարավորությունն ստանալն է, որն անհրաժեշտ է Ֆիքսացիայի ենթարկել լրացուցիչ դաշտնի համաձայնության մեջ: Եթե մենք ուզում ենք Իրաքին օգնել, ապա այս բանը պետք է անենք արագ: Ռազմանյութերն արդեն փոխադրվում են Կոնստանցա: Միայն այս կետում են թուրքերը հանդիսանում ոչ թե ստացող, այլ տվող կողմ: Ուստի այս կետն անհրաժեշտ է դիտել որպես փոխհատուցում Թուրքիայի կողմից մեր այն հեռուն գնացող խոստումների համար, որոնք վերաբերում են Թուրքիայի անվտանգությունը և նեղուցների հարցում նրա շահերն ապահովելուն: Այս պատճառով անհրաժեշտ է, որ երկու պարտնյորների միջև լիակատար պարզություն լինի այդ փոխհատուցման հարցի վերաբերյալ:

Մեզ համար բավական չէր լինի, եթե պայմանավորվածությունն ձեռք բերվեր միայն այն մասին, թե Թուրքիան թույլ կտա այն ռազմանյութերի տրանզիտը, որոնք հասցեագրված կլինեն չեզոք պետություններին, և հետո կմտածի, թե ինքը միայն պարտավորվել է հարկ եղած դեպքում մի քանի վազոն ուղարկել Իրան կամ Ավղանստան: Ավելի շուտ, նայած դրություն հետագա զարգացմանը Մերձավոր Արևելքում, մեզ համար կարող է ցանկալի լինել Թուրքիայի վրայով մեծաքանակ ռազմանյութեր ուղարկել Սիրիայի կամ Իրաքի համար: Բանակցությունների ժամանակ պետք է լիակատար համաձայնություն ձեռք բերվի այս հնարավորության մասին:

3. Այն դեպքում, եթե այս հարցը քննարկելիս անհրաժեշտություն ծագի համաձայնվել այն բանին, որպեսզի



բեռները հասցեագրվեին չեզոք պետութիւններին, եւ խնդրում եմ Ձեզ հաշվի առնել, որ նման հասցեագրումը տեղի կունենա քողարկման նպատակով: Պետք է համաձայնութիւն ձեռք բերվի, որ հետագայում այս բանին նշանակութիւն չի տրվելու:

4. Որպէս ամենից ավելի ձեռնտու փոխհատուցում, Դուք կարող եք Թուրքերին առաջարկել ամենից առաջ Ադրիանապոլսի մոտի տերիտորիայի մի մասի հանձնումը: Մենք սրա տակ հասկանում ենք, ինչպէս Ձեզ հայտնի է, ոչ թե 1915 թվին Ադրիանապոլսի մոտ Թուրքիայից Բուլղարիային անցած ամբողջ տերիտորիան, որը Բորիս Թագաւորը չէր կամենա ամբողջովին տալ, այլ առաջին հերթին նրա արեւելյան կեսը, ըստորում համեմայն դեպք Թուրքիային կանցնի Պիտիոնից Ադրիանապոլիս տանող ճանապարհը:

5. Էգեյան ծովի այս կամ այն կղզին առաջարկելու վերաբերյալ ես կուշենայի հանձնել Ձեզ վճռելու՝ հարկավոր է արդյոք պայմանագիրը կնքելիս այս հարցը շոշափել: Այն դեպքում, երբ այդ հարկավոր կլինի, ես խնդրում եմ, նախքան որեւէ բան խոստանալը, հեռագրել այստեղ:

Ձեր բանակցութիւնների ընթացքի մասին խնդրում եմ որքան կարելի է շուտ հաղորդեք հեռագրով:

ՌԻԲԲԵՆՏՐՈՊ

ՊԱՊԵՆԸ—ՌԻՖԲԵՆՏՐՈՊԻՆ

Գ ա ղ Տ Ն Ի

ՀԵՌԱԳԻՐ

Անկարա, 20 մայիսի 1941 թ  
Ստացված է 20 մայիսի 1941 թ. 20 ժ. 55 ր.  
№ 582

Հաղորդված է Ֆուշլ № 1593-ով  
20 մայիսի 20 ժ. 15 ր.

Արտաքին գործերի ռայխսմինիստրին  
Ի պատասխան 19-ի № 485 հեռագրին

Ստանալով Ձեր նոր հրահանգները, ես խնդրեցի Սարաջոլուին որքան կարելի է շուտ սկսել մեր բանակցությունները: Նա ինձ ասաց, թե միայն շաբաթ օրն է ինքը հնարավորություն ունեցել անգլիական դեսպանին կողմնորոշել թուրքական կառավարության դիտավորություններին վերաբերող հարցերում՝ համապատասխան իմ մայիսի 16-ի № 563 հեռագրին: Ես պետք է երկու-երեք օր համբերեմ, մինչև որ այս գործը կարգավորվի: Մնացածում ես ամեն բան նախապատրաստում եմ, որպեսզի մենք ավելի շուտ կարողանանք կնքել պայմանագիրը: Սարաջոլուի հետ ունենալիք հետևյալ զրույցից հետո ես Ձեր քննարկման եմ ներկայացնում պայմանագրի նախագիծը:

Ես դիտավորություն չունեմ հենց այժմ առաջարկել թուրքերին այս կամ այն կղզին, որը նրանց համար էլ հազիվ թե ընդունելի կլիներ, քանի դեռ գործողությունները շարունակվում են: Դեռ ավելին. մեր բանավոր զրույցին համապատասխան ես միայն ուզում եմ հայտնել, որ այս հարցերը կարող են թուրքիայի օգտին վճռվել խաղաղության պայմանագիր կնքելիս:

ՊԱՊԵՆ

ՀԵՌԱԳԻՐ

Ֆուշլ, 26 մայիսի 1941 թ. 1 ժ. 41 ր.

Ստացված է 26 մայիսի 1941 թ. 2 ժ. 45 ր.

Արտաքին գործերի ռալխամինիստր 213/R 41

Ֆուշլ, 25 մայիսի 1941 թ.

Հաղորդված է Անկարա № 527-ով 26 մայիսի

Անձամբ դեսպանին

Ի պատասխան 1941 թ. մայիսի 23-ի № 598 հեռագրին.

Ես հետաքրքրությամբ ծանոթացա Ձեր այն հաղորդագրությանը, որը վերաբերում է Սարաջոլլուի հետ ունեցած Ձեր առաջին զրույցին՝ պայմանագրի սպասվելիք կնքման մասին:

Ձեր հեռագրի § 2-ի առթիվ ես կուզենայի նշել, որ «Թուրքիային հարեան հարավային և արևելյան գոտիներում՝ թուրքական ցանկությունների բավարարման (Interessen-Wahrung türkischer Wünsche)» վերաբերյալ խոստումներն առանձնապես զգուշավոր վերաբերմունք են պահանջում: Ես Ձեզ խնդրում եմ այս կետի շուրջը սահմանափակվել միայն շատ քիչ կոնկրետ արտահայտություններով: Ձեզ հայտնի, այստեղ նախապատրաստված պայմանագրի նախագծում այս հարցի առթիվ ասված էր. «Գերմանիան քաղաքականորեն և դիվանագիտորեն կաջաջականի Թուրքիայի ձգտումները՝ նրա տիրապետություններն ապահովելու և հասնելու Լոզանի պայմանագրի նրա համար կենսա-



Fernschreibstelle

Auswärtigen Amtes

Geheime Reichssache

1. 1. 1941. AUSS. AMT

2. 1. 1941. ANKARA

NR. 55. TEL. IN Ziff. 1 GEN. CH. TERP. 1

GEHEIMVERKEHR FÜR GEHEIME REICHSSACHEN

FÜR SO SCHAFTER PERSÖNLICH.

BY TELEGRAMM 598 V. 23. NOV. 1941

VOR IHRER MELDUNG ÜBER IHR ZWEITES GESPRÄCH MIT  
DARACULO ÜBER DEN IN AUSSICHT GENOMMENEN  
VERTRAGABSCHLUSS HABE ICH MIT INTERESSE KEHRTEIL  
GENOMMEN.

ZU 2. FEBR. 21. IHRES TELEGRAMMS HOLCHTE ICH BEMERKEN  
DASS DIE ZUSAGE DER "INTERESSENWÄHRUNG TÜRKISCHER  
WIRTSCHAFT IN SÜDBALCHEN UND ÖSTLICHEN NACHBARZONE"  
BESONNENS BEHUTSAMER BEHANDLUNG BEDARF. ICH BITTE SIE  
IN DIESEN PUNKTE AUF SEHR WENIG KONKRET GEHALTENE  
VERWÄRUNGEN ZU BESCHRÄNKEN. IN DER IHNEN BEKANNTEN, NIER  
GEFERTIGTEN SKIZZE DINES VERTRAGES STEHT ES IN DISSER  
RANSICHT "IN SÜDBALCHEN WIRD DIE BESTREBUNGEN DER TÜRKER

№ 6 փաստաթղթի առաջին էջի 3-րդ սյուսնինը





կանորեն անհրաժեշտ վերաքննմանը: Մենք պետք է խուսափենք այն բանի աշխարհագրական որևէ ճշգրիտ որոշումից, թե ինչ ուղղությամբ կարող են ընթանալ Թուրքիայի նման ձգտումները: Մեր այսօրվա հարաբերությունները Ֆրանսիայի հետ և առանձնապես մեր համագործակցությունն այս երկրի հետ յիսուսյալ չեն թույլ տալիս, որ մենք աջակցենք Թուրքիային՝ այս ուղղությամբ նրա որևէ պահանջանքի մեջ: Նույնպես և էգեյան ծովի այս կամ այն կղզու նկատմամբ եղած ակնկալությունների, ինչպես նաև նեղուցների ստատուսի վերաբերմամբ հանձնարարվում է շատ զգուշավոր ձևակերպումներ ընտրել մինչև պայմանագրի նախագծի հետագա կոնկրետացումը:

Սպասում եմ Զեզանից հետագա շուտափուլյա հաղորդագրություններ բանակցությունների ընթացքի մասին:

ԹԻԲԲԵՆՏՐՈՒ

ihren Gesamtstand zu sichern und die ihnen  
legenden Hindernisse der entsprechenden Revision der Bestimmungen  
des Vertrages von Lausanne zu beseitigen, zu klären und  
differenziell unterstützen, mit wieweil es ihnen sehr  
wünschenswert ist, ihre geographische Festlegung in einem  
Punkte derartige Bestimmungen der Türkei gegenwärtigen  
zum Ausdruck zu bringen (Stichtunftsentscheidung)  
gestattet werden, derartige Verhältnisse zu klären, durch  
unsere Zusammenarbeit mit dieser Lande in Bezug auf nicht  
die Türkei zu irgendwelchen Umständen in Bezug  
auf die zu ermuntern, auch hinsichtlich der  
Inanspruchnahme des Erwerbes der Linie der Eisen  
bahn der Adana sowie hinsichtlich des Angebots  
werden sich bis zu einem näheren Kontakt zu dem  
Vertragsprozedere sehr wohl mit dem Gemeinwohl verbinden  
empfehlen (Absatz)  
Ihrer höchsten weiteren Berichterstattung werden der  
Fortgang der Verhandlungen sehr zu wünschen

ՌԻՔԵՆՏՐՈՊԸ — ՊԱՊԵՆԻՆ

Ք ա դ ս ն ի

ՀԵՌԱԳԻՐ

Ֆուլ, 9 հունիսի 1941 թ, 15 ժ. 30 ր.

Ստացված է 9 հունիսի 1941 թ. 16 ժ. 13 ր.

№ 526

Հաղորդված է Անկարա

№ 631 ով 9 հունիսի 1941 թ.

ՀՈՒՅԺ ՇՏԱՊ

Անձամբ դեմպանին

Ի պատասխան 1941 թ. հունիսի 6-ի № 679 և հունիսի 7-ի № 686 հեռագրերին:

Դեմ առաջագրեց այն առարկությունը, թե դրա համաձայն

1. Պարոն նումանը պայմանագրի մեր ձևակերպման Գերմանիան կարող է թուրքիայի խնդիրքն Անգլիային՝ երրորդ կողմի հարձակման դեմ օգնելու մասին, ինչպես նաև թուրքիայի այլ կապերն Անգլիայի հետ, դիտել որպես գործողություններ, որոնք կողմնակի կերպով ուղղված են Գերմանիայի դեմ, և հայտարարեց, թե թուրքական կառավարությունը կցանկանար բացառել գերման-թուրքական պայմանագրի այսպիսի մեկնության հնարավորությունը: Սրանով իսկ նա արտահայտեց թուրքական տեսակետի հիմքը մեզ հետ բանակցություններ վարելիս: Թուրքիան կկամենար պայմանագիր կնքել Գերմանիայի հետ, որպեսզի իրեն ապահովի գերմանական հարձակումից, սակայն միաժամանակ կկամենար դաշնակից մնալ Անգլիայի հետ



և, ըստ երևույթին, իրեն համար հնարավորութուն պահել հարկ եղած դեպքում թեկուզ և անուղղակի կերպով գործակցելու նրա հետ քաղաքական և ռազմական տեսակետից: Թուրքական կառավարությունը պետք է իր համար հստակորեն պարզի այն, որ եթե նա թեկուզ և անուղղակի կերպով գործակցում է Անգլիայի հետ, որի դեմ Գերմանիան կենաց և մահու կռիվ է մղում, ապա սրանով իսկ Թուրքիան ավտոմատիկորեն ընկնում է Գերմանիայի հակառակորդների բանակը: Սրանով իսկ նա նորից հրաժարված կլիներ շեղոթությունից, որի վերականգնումը պետք է Գերմանիայի հետ կնքվելիք պայմանագրի ամենամինիմալ արդյունքը լինի: Մենք, իհարկե համաձայն ենք, որ Թուրքիան ցանկանում է Գերմանիայի հետ կնքվելիք պայմանագիրն այնպես ձևակերպել, որպեսզի այն չհանդիսանա Անգլիայի հետ ունեցած իր պայմանագրի բացահայտ խզում. սրան համապատասխան էլ մենք ձևակերպեցինք մեր առաջարկները: Իսկ եթե Թուրքիան մեղաճի պահանջում է, որ ուղղակի ճանաչենք Անգլիայի հետ ունեցած իր պայմանագիրը, և եթե նա կամենում է պարզորեն վերապահում անել վերջինիս հետ համագործակցելու հնարավորության մասին, ապա, իհարկե, մեզ համար սա անընդունելի է:

II. Թուրքիայի վրա երրորդ կողմի հարձակման հնարավորությունը, որի մասին հիշատակում է Նումանը, զուտ թեորիա է: Ընդհանրապես այստեղ խոսք կարող է լինել միայն Ռուսաստանի և Իտալիայի մասին: Սակայն Թուրքիայի վրա հարձակումն այս երկու տերությունների կողմից, ելնելով իրերի գոյություն ունեցող դրությունից, քաղաքական ռեալություն չի հանդիսանում, մանավանդ նկատի ունենալով Գերմանիայի վերաբերմունքը Թուրքիայի հանդեպ:

III. Այս պատճառով ենթադրություն է ծագում, թե պարոն Նումանը պայմանագրի մեր նախագծի դեմ արած իր առարկություններում նկատի ունեն հնարավոր ելույթ-



ներ Սիրիայի դեմ: Հնարավոր է, որ նա հենց իսկ այս նկատառումով անհարմար համարեց մեր կողմից առաջարկված պարզորոշ հիշատակումն անուղղակի միջոցառումների մասին: Ճիշտ է, թուրքական արտաքին գործերի մինիստրի պատասխանը Ձեր այն հարցումին, որն արված է հունիսի 8-ի № 625 իմ հեռագրին համապատասխան, բավարար է, այնպես որ, ըստ երևույթին, մենք կարող ենք ելնել այն ենթադրությունից, թե թուրքական կառավարությունը սիրիական հարցում հետապնդում ևս զուսպ կլինի: Սրա կապակցությամբ ես նաև ուզում եմ Ձեր հունիսի 7-ի № 686 հեռագրի վերջին պարբերության վերաբերմամբ նշել, որ Ֆրանսիային հաշվի առնելու անհրաժեշտությունն ուղղակի անհնարին է դարձնում Սիրիայի վերաբերմամբ Թուրքիային այժմ որևէ գրավոր կամ նույնիսկ բանավոր խոստումներ տալը:

IV. Ղեկավարվելով վերև շարադրված տեսակետով, ես Ձեզ խնդրում եմ պայմանագրի առանձին մասերը խմբագրելիս հետևյալ դիրքը բռնել.

1. Պրեամբուլա: Թուրքիայի կողմից այժմ առաջարկված ներածական մասի ձևակերպումը մեզ անհաջող է թվում: «Նաղաղասեր բնույթ» արտահայտությունն արդեն ոճաբանորեն (sprachlich) անընդունելի է և պետք է որ փոխարինված լիներ «բարեկամական բնույթ» արտահայտությամբ: Այն նամակների ոգով, որ նրանք փոխանակեցին» խոսքերը, ճիշտ է, մտցվել էին նաև մեր առաջարկած տեքստում, սակայն ավելի ուշ նրանք այն կասկածը հարուցին, թե նամակների փոխանակումը պետությունների երկու ղեկավարների միջև դեռ չի ավարտված, որովհետև, ինչպես հայտնի է, թուրքական պրեզիդենտը դեռ չի պատասխանել ֆյուրերի վերջին նամակներին: Բացի այդ, ընդունված չէ, որ հրապարակման ենթակա պայմանագրում վկայակոչումներ լինեն այն գրագրության նկատմամբ, որը միաժամանակ ևեթ չի հրապարակվում: Մինչև այժմ նրա հրապարակումը չէր նախատեսվում և մեզ

անժամանակյա է թվում: Վերջապես, հարկավոր է հանել  
թուրքերի խմբագրութեամբ առաջարկված պրեամբուլայի  
նաև եզրափակիչ մասը, որը խոսում է երկու կողմերի  
այժմյան պարտավորությունների մասին, որովհետև դա  
կլինի թուրք-անգլիական պայմանագրի պարզորոշ ճանա-  
չում: Անձամբ Ձեզ ինֆորմացիա տալու համար նկատեմ,  
բացի այդ, որ մենք, ընդունելով պրեամբուլայի այսպիսի  
խմբագրումը, մեզ-համար կփակեինք ճանապարհը դեպի  
պերման-թուրքական հարաբերությունների հետագա զար-  
գացումը: Գերմանիայի ապագա հնարավոր ցանկություն-  
ների դեմ Թուրքիան այն ժամանակ միշտ իր տրամադրու-  
թյան տակ կունենար հարմար առարկություն, թե մենք  
պայմանագրի ներածական մասում պարզորոշ հրաժարվել  
ենք այդպիսի ցանկություններ ներկայացնելուց:

Այսպիսի պարագաներում մեզ թվում է, որ ամենից  
լավ է ներածական մասը ձևակերպել բոլորովին համառո-  
տակի, հետևյալ կերպով.

Գերմանական ռաշխականցիները և Թուրքական ռեսպուբ-  
լիկայի պրեզիդենտը, ոգևորված իրենց փոխադարձ հարա-  
բերությունների բարեկամական զարգացման համար ամուր  
հիմք ստեղծելու ցանկությամբ, համաձայնությամբ եկան  
այդ նպատակով պայմանագիր կնքել... և այլն:

2. Առաջին հոդվածում մենք հենց պարոն Նումանի  
փաստարկումը նկատի առնելով, պետք է ուշադրություն  
դարձնենք, որպեսզի պահպանված լինեն «ուղղակի կամ  
անուղղակի» խոսքերը: Մեր փաստարկներն այս առթիվ  
բոլորում են այն բանից, ինչ վերը շարադրված է № 1-ով,  
ըստորում առանձնապես անհրաժեշտ կլինեն մատնանշել  
այն, թե Անգլիայի հետ ամեն մի համագործակցություն,  
որն անուղղակիորեն դարձվում է մեր դեմ, կլինի թուրքա-  
կան չեղոթության խախտում, որը հենց միայն ու միայն  
վերականգնվում է ներկա պայմանագրի կնքումով:

3. Այն հավելման շնորհիվ, որ թուրքական կողմը կու-  
ղենար կատարել 2-րդ հոդվածում, այս հոդվածի նշանա-

կությունը չափազանց կթուլանար և նորից կսահմանափակվեր պայմանագրի մեկնության հարցերով, ինչպես այդ սկզբնապես արդեն առաջարկվել էր թուրքերի կողմից: Այս ցանկությունը մեզ առավել ևս անհասկանալի է թվում, քանի որ 2 հոդվածի մեր առաջարկած տեքստում խոսքը միայն այն միջնորդի մասին է, ինչ սովորաբար որպես ինչորև ըստինքյան հասկանալի բան մտցվում է երկու երկրների միջև կնքվող նման պայմանագրերում: Եթե թուրքերն ուզում են այդ բացառել կամ մատնանշած ձևով թուլացնել, ապա նրանք համենայն դեպս շատ հեռու են այն դիրքորոշումից, որով ղեկավարվում ենք մենք այս պայմանագիրը կնքելիս:

V. Իսկ եթե այժմ Թուրքիան չի ուզենա համաձայնել պայմանագրի մեր առաջարկած ձևակերպմանը կամ նորից կմտցնի այդ պայմանագիրը թուլացնող առաջարկներ, ապա մենք պետք է մեր առաջ հարց դնենք՝ ընդհանրապես այս պիսի պայմանագիրը կհամապատասխանի՞ արդյոք մեր նպատակներին: Թուրքերի դիրքը, որը հայտաբերվել է նրանց գործելակերպով, այնքան զուսպ է, որ պայմանագիրը թուրքական խմբագրությամբ՝ թուրքական մամուլի կողմից նրա մեկնաբանումով կարող էր վերածվել լիակատար անբովանդակության: Ընդամեն, հաշվի առնելով ներկայիս բաղադրական դրությունը, թուրքական կողմը զգալիորեն ավելի մեծ քաղաքական շահագրգռվածություն ունի պայմանագիր կնքելու մեջ, քան մենք: Այդ պատճառով թուրքական կառավարությունը շատ լավ կանի, եթե, վերջապես, որքան կարելի է շուտ ընդհանի վերջնական վճիռ՝ ընդունում է նա արդյոք մեր առաջարկած պայմանագիրը:

Թուրքական կառավարության հետ վարելիք Ձեր բանակցությունների ընթացքի մասին ես խնդրում եմ անհապաղ հեռագրով հաղորդել ինձ:

ՌԻՐՔԵՆՏՐՈՊ



ՀԵՌԱԳԻՐ

Յուլի, 13 հունիսի 1941 թ. 14 ժ. 20 ր.

Ստացված է 13 հունիսի 1941 թ. 14 ժ. 30 ր.

№ 548

Հաղորդված է Անկարա

№ 650-ով 13 հունիսի 1941 թ.

Ի պատասխան հունիսի 12-ի 715 հեռագրին

Դուք Ձեր հեռագրում մեզ հաղորդում եք, որ մեր ցանկությունը՝ պայմանագրից հանել Թուրքիայի նախկին պարտավորությունների նկատմամբ եղած վկայակոչումը՝ այդտեղ այն տպավորությունն է թողել, իբր թե մենք այդ պայմանագրով ուզում ենք Թուրքիային ստիպել անգլիական բանակից ուղղակի անցնել գերմանականը: Այդ տպավորությունը սխալ է: Ինչպես Ձեզ արդեն հաղորդվել է, մենք ոչ մի այլ բան չենք ենթադրում, բացի Թուրքիայի վերադարձից դեպի չեզոքությունը, որի մասին ինքը Թուրքական կառավարությունն ուզում էր համառորեն հայտարարել բանակցությունների սկզբին, բայց որից նա հետո խուսափեց: Նախքան մենք կկարողանանք զբաղվել այն նոր դրության քննությամբ, որ ստեղծվել է Թուրքիայի այժմյան դիրքի շնորհիվ, ինձ համար հետաքրքիր կլիներ իմանալ՝ կարելի՞ է արդյոք գտնել մի այլ ձևակերպում, որպեսզի պայմանագրում վերապահում արվի Թուրքիայի այժմյան պարտավորությունների մասին: Օրինակ, կարելի կլի-



ներ կանգ առնել հետեյալ ձևակերպման վրա. «Յանկանա-  
լով երկու երկրների միջև հարաբերություններ հաստատել  
փոխադարձ վստահության և անկեղծ բարեկամության հի-  
ման վրա, երկու կողմերը, պահպանելով գոյություն ունե-  
ցող պարտավորությունները, համաձայնության եկան պայ-  
մանագիր կնքել...» Այսպիսի ձևակերպումն իմաստի տեսա-  
կետից նույնական կլինի թուրքականին: Սակայն նա չէր  
ունենա այն անախորժ կողմնակի համը, իբր թուրքիան  
պետք է իրեն ապահովի այն բանի դեմ, թե Գերմանիան  
նրանից կպահանջի թուրքիայի գոյություն ունեցող պայ-  
մանագրային պարտավորություններին ինչ-որ անհամատե-  
ղելի մի բան:

Ես Ձեզ խնդրում եմ այս մասին հարցնել թուրքական  
արտաքին գործերի մինիստրին, ըստորում հայտնել նրան,  
որ Դուք դեռ ոչ մի պատասխան չեք ստացել Ձեր այն հա-  
ղորդագրության առթիվ, որը վերաբերվում էր Սարաջոլուի  
հետ ունեցած վերջին զրույցին, այլ ստացել եք միայն այս  
փոքրիկ հարցումը, և որ Դուք, իբր թե, ոչ չի տեղեկու-  
թյուն չունեք Բեռլինից՝ հնարավո՞ր է արդյոք առհասարակ  
պայմանագիր կնքել թուրքիայի այժմյան դիրքի դեպքում,  
որն այնպես տարբերվում է բանակցություններ սկսելու  
մոմենտին նրա բռնած դիրքից: Այն կապակցությամբ, որ  
ես վաղն ուղևորվում եմ Իտալիա և կվերադառնամ միայն  
մյուս շաբաթ, ես Ձեզ խնդրում եմ հենց այսօր ուղարկել  
ինձ թուրքական կառավարության պատասխանն այս հարց-  
ման վերաբերյալ, որովհետև ես կուղենայի մինչև իմ մեկ-  
նելը մի վերջնական վճիռ ընդունել այս գործի առթիվ:

ՌԻՔՔԵՆՏՐՈՊ

ՊՈ.ՊԵՆԸ — ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Գ ա ղ ս ն ի

ՀԵՌԱԳԻՐ

Անկարա, 17 հունիսի 1941 թ.

Ստացված է 17 հունիսի 1941 թ. 13 ժ. 22 բ.

№ 741

ՀՈՒՑԺ ՇՏԱՊ

Արտաքին գործերի ուսլիսամինիստրին

Ի պատասխան հունիսի 16-ի № 671-ի

Ձեր հրահանգների համաձայն մենք Սարաջոզլուի հետ միասին հենց նոր համեմատեցինք պայմանագրային տեքստերը և հաստատեցինք նրանց կատարյալ նույնականությունը: Միայն 3-րդ հոդվածում պետք է ավելացվի հետևյալ նախադասությունը.

«Վերոհիշյալ պայմանագիրը կվավերացվի և վավերագրերի փոխանակումը պետք է տեղի ունենա Բեռլինում որքան կարելի է շուտ»:

2. Ձեռք է բերված լիակատար պայմանավորվածություն տնտեսական հարաբերությունների հարցի շուրջը նույնաների փոխանակման վերաբերյալ:

3. Մամուլի համար հաղորդագրությունը կկատարվի Ձեր ցանկության համապատասխան: Այսպիսով, տեքստը համապատասխանում է Ձեր հեռագրին:

4. Սարաջոզլուն պատրաստ է պայմանագիրը ստորագրել չորեքշաբթի հունիսի 18-ին երեկոյան: Ճիշտ ժամը նա կհաղորդի ինձ վաղն առավոտյան, պրեզիդենտին ղեկուցե-

լուց հետո: Ձեր ցանկութեան համաձայն պայմանագրի հրապարակումը տեղի կունենա հունիսի 19-ի առավոտվա մամուլում: Գերմանական և թուրքական ռազիոները ոչինչ չեն հայտարարի հունիսի 18-ից լույս 19-ի գիշերվա լուրերում: Այսպիսով, այս հաղորդագրութեանը մամուլում երկու երկրներում էլ կհրապարակվի միայն հունիսի 19-ին: Սարաջոլուն, իհարկե, հոգ կտանի, որ թուրքական մամուլն ու ռադիոն բարեկամութեան պայմանագիրը նույնպես սղջունեն համապատասխան ջերմութեամբ:

5. Իմ լիազորությունների համար բավական է հեռագիր ուղարկել իմ անունով:

6. Խնդրում եմ ըստ հնարավորության միաժամանակ լիազորություններ ուղարկել երկաթուղային համաձայնագիրը ստորագրելու համար:

ՊԱՊԵՆ



ՊԱՊԵՆԸ — ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Գ ա ղ Տ Ն Ի

Տեղադրված 5 օգոստոսի 1941 թ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊՈՒՆԻԹՅՈՒՆ

№ Ա. 3018/41

Արտաքին գործերի մինիստրությանը,  
Բեռլին

Բովանդակություն. Պանթուրանական շարժում:

Լավատեղյակ մի վստահված անձնավորություն հա-  
ղորդում է. նկատի ունենալով գերմանացիների հաջողու-  
թյունները Ռուսաստանում, թուրքական կառավարական  
շրջաններն ավելի ու ավելի են սկսում զբաղվել իրենց այն  
հայրենակիցների վիճակով, որոնք գտնվում են ռուս-թուր-  
քական սահմանի մյուս կողմը, և առանձնապես ադրբեջա-  
նական թյուրքերի վիճակով:

Այդ շրջաններում, ըստ երևույթին, հակամետ են վե-  
րադառնալ 1918 թ. դեպքերին և ուզում են իրենց միացնել  
այդ մարզը, առանձնապես Բաքվի ամենաարժեքավոր նավ-  
թի հանքավայրերը: Այս նպատակի համար, որոշ անձե-  
րից, որոնք Արդուլ Համիդի ժամանակ արդեն մասնակիո-  
րեն կատարում էին նման ծառայություն, կազմվել է մի  
յուրատեսակ էքսպերտների կոմիտե, որին հանձնարարվում  
է հավաքել այս հարցին վերաբերող ամբողջ նյութը և ինչ-  
պես երկրի ներսում՝ արտասահմանից գաղթած էմիգրանտ-

1 Տեղադրված — Ստամբուլի մոտ եղած ամառանոցային վայրի անուն,  
որտեղ գտնվում էր նախկին գերմանական դեսպանության ամառա-  
նոցը:

ների շրջանում, այնպես էլ արտասահմանում, առանձնապես Իրանի ադրբեջանական մասում, հավաքագրել նոր Թուրքիան թյուրքերով բնակված այն մարզերի հետ միավորելու կողմնակիցներին, որոնք սահմանակից են նրան արևելքից ընդհուպ մինչև Կասպից ծովը:

Այս խմբի ղեկավարը Ստամբուլի ղեկուտատ Շյուքրյու Ենի բակչան է (որը ինքն իրեն համարում է թաթար, թեպետ նրա ընտանիքն արգեն մի քանի սերունդ ապրում է Թուրքիայում):

Այնուհետև այստեղ են մտնում.

Նուրի փաշան (էնվեր փաշայի եղբայր. իր ժամանակին նա առաջատար պոստ էր գրավում այսպես կոչված Իսլամ Օրդույում<sup>1</sup> և նրա մասին ասում են, որ նա առանձնապես համակրում էր իր եղբոր պանթթուրանական պլաններին):

Պրոֆեսոր Զեքի Վելիդին (բաշկիր): Առաջ Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր է եղել, բայց Աթաթուրքի հետ ընդհարվելու պատճառով պետք էր թողնել այն, որպեսզի ժամանակավորապես տեղավորվեր Վիեննայում, Հալեում և Բոննում:

Ահմեդ Զաֆարը (որին անվանում են նաև Ահմեդ Սաիդ Զաֆար), Ղրիմցի թյուրք, համարվում է որպես մի մարդ, որի վրա բոլորովին չի կարելի հույս դնել. նաև լրտեսական աշխատանք է տանում կառավարության օգտին. ինչպես ասում են, դեռ հիմա էլ մոտ է գեներալ Սիկորսկու «Պրոմեթեյ» կադմակերպությանը՝ Լոնդոնում: Հայտնի է որպես թյուրքագետ՝ Ահմեդ Զաֆարօղլու անունով:

Այս խմբին պետք է դասել նաև Քարդուլում թուրքական ղեսպան Մեմդուխ Շեվքեթին, որը վերջերս մասնակցում էր Անկարայում տեղի ունեցող բանակցություններին: Լինելով աստիճանավոր, նա հազիվ թե կկարողանա այլ գիծ

<sup>1</sup> «Իսլամի բանակ» — պանթուրական կադմակերպություն Թուրքիայում:

բռնել, քան կառավարութիւնը, թեպետ նրան չի էլ կարելի խառնել վերն անվանվածների հետ, բայց այնուամենայնիւ՝ նա համարվում է արեւելյան թյուրքերի իսկական բարեկամը:

Ինչ վերաբերում է արեւելյան թյուրքական ժողովուրդներին բացի Ադրբեջանից, այսինքն Պովոլժյեի թյուրքերին, թաթարներին, թուրքմեններին և այլն, ապա թուրքական կառավարական շրջանների այժմյան պլանները հանդում են այս թյուրքերի միավորմանը սեփական, արտաքուստ անկախ արեւելա-թյուրքական պետութեան մեջ, որտեղ, սակայն, արեւմտյան թյուրքերը կիսազան «խորհրդատուներ» վճռողական քաղաքական և կուլտուրական դեր:

Բայց այս պլանները ոչ մի կերպ չեն համընկնում հենց իրենց արեւելյան թյուրքերի ցանկութեաններին: Վերջինների կարծիքի համաձայն, նոր թուրքիայում միավորված թուրքերն արդեն կորած են իսկական թուրքական ազգութեան համար և այն էլ ոչ թե վերջին ժամանակներում, այլ արդեն շատ տարիներ սրանից առաջ: Բաքվում նրանց ներկայացնում են ոչ այլ ինչ, քան լեվանտացիներ, որոնք խոսում են թուրքերեն լեզվով, որոնց հետ ցանկալի է հնարավորութեան չափ քիչ շփում ունենալ: Այս զարգացումն առ այսօր ունի բազմադարյան պատմութիւն: Օսմանյան պարսկութեան արդեն վերջին հարյուրամյակներում արքունիքի և կայսրութեան խորձր աստիճանավորութեանը միայն աննշան մասով էր բաղկացած թուրքերից: Այն հաջորդաբար հունգարական ծագումից էր, ալբանացիներից և ապա, Արդու-Համիդի օրով, չերքեզներից ու արաբներից, բայց երբեք թուրքերից չէր: (Այս պատմական նկատառումներն ու քաղաքական տեսակետը հաճախ հաստատվում էին Թաւրիզում շահադրգոված շրջանների հետ ունեցած քաղաքական խոսակցութեանների ժամանակ: Հենց այնտեղ այժմ այս թեման դրված է օրակարգում, որովհետեւ Թաւրիզի բնակիչները նույնպէս ադրբեջանական թյուրքեր են հանդիսանում և իրենց զգում են որպէս Բաքվի թյուրքերի



արյունակցական ազգակիցներ: Առանձնապես անհրաժեշտ է նշել, որ Թավրիզում այս շարժման առաջատար ղեկավարներից մեկը ինքը իրանական զիներալ-նահանգապետն է):

Շարժման ղեկավարն այժմ, ինչպես և առաջ, համարվում է Մեհմեդ էմին Ռասուլ-զադեն (Մուսավաթ պարտիայի-հիմնադիրը. Մուսավաթ նշանակում է հավասարություն): Նա հարեց լեհական «Պրոմեթեյ» շարժմանը, որը ոչ այլ ինչ էր, քան լեհական գլխավոր շտաբի ենթաբաժինը: Գլխավոր շտաբի ֆոնդերով (այսպես կոչված Պիլսուդսկու ֆոնդերը), որոնք փոխադրվել էին Շվեյցարիա, Ռասուլ-զադեն ապրում էր 1939 թ. տեղի ունեցած լեհաստանի անկումից հետո էլ: 1940 թ. քաղաքական հանձնարարություններ նա եղել է Սիկորսկու մոտ Լոնդոնում, իսկ ապա ուրիշ լեհական էմիգրանտների հետ ապրում էր Բուխարեստում: Սա խոշոր քաղաքական գործիչ է, եթե ուշադրության չառնենք ֆինանսական կողմը: (Քանի որ «Պրոմեթեյ» կազմակերպության մյուս թուրք անդամները վերջերս թուրքական տերիտորիայի վրա Գերմանիայի նկատմամբ թշնամական ոգով էին արտահայտվում, ապա Ռասուլ-զադեի նկատմամբ էլ հարկ կա որոշ զսպվածություն պահպանել): Ռասուլ-զադեի ներկայացուցիչը Թուրքիայում նրա համհարզ Միրզա Բալան է (ներկայումս նա թուրքական բանակ է կանչված և որպես շարքային զինվոր ծառայում է Ստամբուլի մոտերքում: Նրա մասին բան չկա ասելու, բացի այն, որ նա իր ավելի նշանավոր ուսուցչի հավատարիմ աշակերտն է): Վստահված անձի կարծիքով այդ երկուսի հետ էլ պետք է աշխատանք տանել: (Արևելա-թյուրք մի ուրիշ վստահված անձի կարծիքով, ավելի լավ է հրաժարվել այդ ամբողջ հին գվարդիայից, որի համար, ելնելով նրա անցյալից և նրա ֆինանսական կապերից, ամենեին չի կարելի երաշխավորել և որին նոր ադրբեջանական պետությունում ոչ մի դեր չի կարելի վստահել):

Այս նոր ադրբեջանական պետությունը չի ուզում ի-

րեն ծանրաբեռնել ուրիշ արեւելյան թյուրքերով, այլ, ընդհակառակն, այն կարծիքն ունի, թե նրանք, այսինքն Վուգայի թյուրքերը, թաթարները, թուրքմենները և այլն, իրենց տարաբնակման բնույթով, տարաբնակում, որն ամենեկին էլ կոմսլակտ չէ, և ամենից առաջ իրենց տնտեսական հետամնացութեան պատճառով՝ բնավ չունեն պետական ինքնութունութեան հավակնութիւն, այլ պետք է դեռ զարգացման երկար ճանապարհ անցնեն: Ադրբեջանական ուղուցիոն շարժումն իրեն խնդիր չի դնում նրանց դաստիարակելը, որպեսզի նրանք պետականութեան հասնեն: Բայց և այնպես վստահված անձը հանձնարարում է շրջանի այս խնդիրը ուսանելին, այլ հոգ տանել, որ գերմանական կազմակերպումն ու փորձը հետագա զարգացման ընթացքում մնան վրձողական: Գերմանիան պետք է առանձին նշանակութիւն տա ըստ հնարավորութեան ուժեղ պետութիւն կազմելուն հարավարեւելքում, որպեսզի ի վիճակի լինի այս զարտուղի ճանապարհով ուսանելին ամբողջ ժամանակ սպառնալիքի տակ պահել: Ուկրաինան այս խնդիրը բավական չափով չի կատարի: Ուկրաինացիները սլավոններ են և կարող են ամեն ժամանակ, ինչպես և բուլղարներն ու սերբերը, գիտակցել իրենց ընդհանուր անցյալը Ռուսաստանի հետ: Ինչ վերաբերում է թյուրքերին, ապա դա լիովին բացառված է.

Իմ այն հիշեցմանը, թե Իրանի կառավարութիւնը նույնպես չափազանց հետաքրքրվում է ադրբեջանական թյուրքերով, իմ վստահված անձը մատնանշեց, որ դա ըստինքյան հասկանալի է: Այժմյան Իրանում ապրում են հավասար քանակութեամբ թյուրքեր և պարսիկներ: Ինքը շահը ծագում է թյուրքական ընտանիքից: Այդ պատճառով նա շատ հեշտութեամբ գրչի մի շարժումով կկարողանար իր իրան-արաբական պետութիւնը դարձնել խառն բնակչութիւն ունեցող մի պետութիւն, եթե նրան ապացուցեին այսպիսի կերպափոխութեան առավելութիւնը և եթե նա տեսներ, որ այսպիսի ճանապարհով կկարողանա իր քաղաքական անկախութիւնը պահպանել: Սրանով բացատր-

վում է և այն դերը, որը խաղում է Թափրիզի գեներալ-նահանգապետը շարժման մեջ:

ՊԱՊԵՆ

P. S. Ի լրումն առաջին էջի:

Անկարալում արևելա-թյուրքական հարցերի վերաբերյալ կառավարության վստահված անձերի թվին է պատկանում նաև թաթարական ծագում ունեցող գեներալ Հյուսեյն Հյուսնյու էմիր էրքիլեթը:



ՎԵՅՑԵԿԵՐԸ — ՌԻՔԵՆՏՐՈՊԻՆ

Գ ա ղ ճ ն ի

Բեռլին, 5 օգոստոսի 1941 թ.

№ 494

Պատճեն

Թուրքական դեսպանն այսօր ինձ ներկայացրեց դեսպանություն իր նոր խորհրդականին: Շուտով նա խոսակցություն ուղղեց սովետական տերիտորիայի վրա ապրող թյուրքական ծագում ունեցող սահմանամերձ ցեղերի վերաբերյալ թեմային: Նա ուշադրություն հրավիրեց այս թյուրքական ցեղերի միջոցով հակասովետական պրոպագանդա մղելու հնարավորության վրա: Հետո նա բավական անկեղծորեն խոսում էր այն մասին, թե հետագայում կարելի է կովկասյան ժողովուրդներին միավորել մի բուֆերային պետության մեջ և ափսոսանքով, որ Կասպից ծովից դեպի արևելք նույնպես կարող էր մի ինքնուրույն թյուրքական պետություն ծագել:

Գերեզեն թուռցիկ կերպով հիշատակեց այս մասին ոչ-պաշտոնական զրույցի տոնով: Բայց նրա նկատողությունները ոչ մի կերպ պատահական չէին, որովհետև նրանք լիովին համընկնում են պարոն Ֆոն Պապենի հետ Ալի Ֆուադի զրույցում արտահայտած կարծիքներին (տես անցյալ ամսի 14-ին Անկարայից ստացված № 2335 հաղորդագրությունը): Գերեզեն շուռացրեց շոշափել հիմնական հարցը, բնութագրելով Բաքուն որպես մի քաղաք, որտեղ ամբողջ բնակչությունը թյուրքերեն է խոսում:

Արտարին գործերի պարոն ռայխսմինիստրին

ՎԵՅՑԵԿԵՐԸ

Պատճենում՝ Տերապիայում գերմանական դեսպանությունը, սուր անդակով:

ՊԱՊԵՆԸ — ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ՝

Φ υ η σ Γ ι

Անկարա, 10 նոյեմբերի 1941 թ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 645/41 գաղտնի

Արտաքին գործերի մինիստրությանը,  
Բեռլին

ԳՆԱԴԱՆԱԿԱՆ ԶԵԿՆԻՅԱԳԻՐ

Բովանդակություն. Դենեբալ Ալի Ֆուադ էրզհանի ուղևորությունը

Ինչպես ես արդեն հեռագրով հաղորդել եմ, թուրքա-  
կան երկու գեներալները վերադարձան դեպի արևելյան  
ռազմաճակատն և ֆյուրերի զորակայանը կատարած իրենց  
ուղևորությունից լիակատար բավականությամբ ղգացումով:

Գնեերալ Ալի Յուսաֆը երեկ երկու ժամով եկել էր ինձ մոտ այցի, որպեսզի ինձ հայտնի իր տպավորությունների մանրամասն նկարագրությունը:

Նրա ասելով, այն սիրալիությունը, որով նրան ընդունել են ռազմական բոլոր ինստանցիաները, ամեն գովասանքից վեր է. նա շարունակ զգացել ու հիշել է զինակցության եղբայրությունն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Նույն միտքը խանդավառությամբ արտահայտել է գեներալ-գեղապետ Ֆրոմմը գեներալ Ալի Ֆուադի պատվին տրված բանկետի ժամանակ:

1 Բնագրի առաջին էջի վրա կա դրոշմոց՝ «Զեկուցված է Ֆյուրերին» և կանաչ մատիտով, ըստ երևույթին Հիտլերի ձեռքով, գրված է «Բ» տառը: Բնագրի վրա կա Վեյցզեկերի ինիցիալը:

Գեներալն առանձնապես շնորհակալ էր գլխավոր շտաբի սպաների հրահանգչական ղեկուցումների համար, որոնք վերաբերում էին խոշոր գործողություններին Կիևի համար մղվող ճակատամարտում, Գեներալն անցնելիս և այլն, ղեկուցումներ, որ նա լսել էր իր այցելած զորական խմբավորումների շտաբներում: Նա դրան ավելացրեց մի խնդիր՝ ստանալ, եթե այդ հնարավոր է, այդ գործողությունների քարտեզը ուսումնական ուժերի դասավորության ներառումով (իհարկե, առանց մանրամասնորեն ցույց տալու գերմանական ուժերը) այն նպատակի համար, որպեսզի այդ ցուցադրական պատմական գործողություններն օգտագործվեն թուրքական ռազմական ակադեմիայում:

Գերմանական հրամանատարները նրա վրա գերազանց տպավորություն են թողել: Առանձնապես խանդավառ գովասանքով նա արտահայտվեց գլխավոր շտաբի աշխատակիցների պատրաստության մասին, ինչպես և նրա կրտսեր աշխատողների մասին:

Գերմանական բանակների չլաված հաջողությունները հակառակորդի ուժերի դեմ մղված մարտերում, որը գերազանցում է նրանց ինչպես մարդկանց քանակով, այնպես էլ սպառազինությամբ, դարող էին ձեռք բերվել հրամանատարական կազմի փայլուն պատրաստության շնորհիվ միայն: Առանձին հիացմունք են առաջ բեցել նրա մեջ Բիկունբային ծառայությունների ֆունկցիաները:

Հասկանալի է, որ նրանց բոլորի համար մեծ իրադարձություն է եղել անձամբ ֆլուրերի կողմից բնդունված լինելը և օպերատիվ իրադրության մասին նրանից մանրամասն հաղորդագրություն լսելը: Այդ ղեկուցումից գեներալ Ալի Ֆուադն այն հետևությունն է արել, որ ֆլուրերը մտադրվում է որքան կարելի է արագ հասնել Կասպից ծովին և Կովկասին: Նա այս հետևությունն արել է առանձնապես այն փաստի հիման վրա, որ 1-ին բանակն օգտագործել են նրա համար, որպեսզի մեծ ուժերով և



չնայելով զգալի կորուստներին, ձեռնարկեն Ղրիմի բացառիկ դժվարին օպերացիան և այնտեղից առաջ խաղան դեպի Հյուսիսային Կովկաս:

Զէ որ այլ կերպ, ենթադրում է գեներալ Ալի Ֆուադը, անհամեմատ ավելի հեշտ կլինեի կտրել Ղրիմի թերակղզին, իսկ 1-ին բանակով շարունակել հարձակումը Ռոստովի վրա:

Հետաքրքրությունից զուրկ չեն գեներալ Ալի Ֆուադի տպավորությունները ռուսական ռազմագերիների ճամբարը կատարած իր այցելության մասին, որտեղ նրան դիմել են մեծ քանակությամբ ռուսական զերիներ, ծագմամբ թյուրքեր, խնդրելով աշակցել, որ ռուսական ռազմագերիների հետ ավելի լավ վարվեին և բարեկամեին նրանց սեռուր:

Ընդ սմին ես կուզենայի կրկին անգամ՝ դառնալ իմ առաջարկին. Ղրիմի գործողությունները վերջացնելուց հետո այնտեղ ստեղծել մի ադմինիստրացիա, որին նշանակալից չափով մասնակցեին Ղրիմի թաթարները: Քաղաքական տեսակետից դա խիստ կազդեր Ռուսքիայի վրա:

Իր ժամանումից հետո հետևյալ օրը գեներալ Ալի Ֆուադը զեկուցում տվեց ռեսպուբլիկայի պրեզիդենտին. զեկուցմանը ներկա էին արտաքին գործերի մինիստրը և մարշալ Չաքմաքը: Այս զրույցը շարունակվեց վեց ժամ. այս փաստն աջացուցեց է այն բանի, թե ինչպիսի բացառիկ կարևոր քաղաքական նշանակություն ունեցավ այս ռզնորությունը:

Գեներալ Ալի Ֆուադի արած ընդհանուր հետևությունները լիովին համընկնում են ֆյուրերի կողմից նրան հայտնված կարծիքին՝ որ ռուսական կամպանիան հիմնականում կարելի է ավարտված համարել, բացի դիմադրության երեք կետերից, իսկ դիմադրության այդ կետերի լիկվիդացիան կախված է միայն օղերնութարանական պայմաններից: Գեներալն այնուամենայնիվ կախժում է, որ մեզ հարկավոր կլինի Ռուսաստանում զգալի ուժեր թողնել: Իսկ ինչ վերաբերում է Եվրոպական Ռուսաստան-

նի օկուպացիային և այս գործոնի ներգործութեանն Ան-  
դլիայի կողմից կիրառվող բլոկադայի վրա, ապա գններա-  
լը կարծում է, որ դա բլոկադան կզրկի գործունակութեու-  
նից:

Գններալն ինձ խնդրեց հայտնել ֆյուրերին, արտաքին  
գործերի պարոն մինիստրին, այլև գններալ-ֆելդմարշալներ  
ֆոն Բրաուխիչին ու Կեյտելին իր խորին, սրտառուչ շնոր-  
հակալությունը:

ՊԱՊԵՆ

# ԽԵՆՏԻԳԸ—ԷՐՔԵԼՆԵՐԻՆ

Բեռլին, 17 նոյեմբերի 1911 թ-

ԴԵՍՊԱՆՈՐԴ ՖՈՆ ԽԵՆՏԻԳ

Խորհարգող և թանկագին գեներալ,

Շատ շնորհակալ եմ Ձեզանից Ձեր նոյեմբերի 10-ի նամակի համար, որը բարեհաջող կերպով հասավ ինձ։ Ինչ վերաբերում է ինձ, ապա այն գործը, որը մենք համատեղ դեռ մինչև Ձեր նամակը ստանալը քննարկել ենք, շտապ կերպով քննության առնվեց մեզ երկուսիս համար ցանկալի իմաստով։ Առանձին մոմենտների վերաբերյալ վերջին որոշումների մասին ես ինքս դեռ սպասում եմ հաղորդագրություն։

Զանազան կողմերից, այդ թվում նաև թուրքական օֆիցիոզ կողմից, ինձ ամենեին խորհուրդ չէին տալիս հենց այժմ՝ դեռ թուրքիա՝ վերսկսելու կամ շարունակելու այն բանակցությունները, որոնց մասին մենք Ձեզ հետ պայմանավորվել էինք։ Ես ինքս հնարավորությունից զուրկ եմ այս հարցի վերաբերյալ որոշ վճռի գալու, որովհետեւ ես, իհարկե, առանց տատանվելու, կգնայի այնտեղ լիակատար գիտակցությամբ ու համոզվածությամբ, որ իմ հայացքները ծառայում են բացառապես գերմանա-թուրքական համագործակցության գործին։ Բայց եթե անաշուկողմից թեկուզ մի շնչին առիթ գտնվի ինձ «հինգերորդ զորասյունին» դասելու, ապա ես, իհարկե, ավելի լավ է հրաժարվեմ։ Ձեր հանձնարարած անձերին արդեն վիզա է տրված Գերմանիա մտնելու։ Բայց հեռագրական այն ան-



դորրագրի տարեթիւց, որն իմ հիվանդութեան հետեանքով  
ինձ հանձնվեց միայն այսօր, ես տեսնում եմ, որ նրանց  
արդեն չի հաջողվել հասնել իրենց նպատակին, այսինքն  
տեսնվել Ձեզ հետ այստեղ, պ. գեներալ:

Ես մեծ համակրութեամբ հետևում էի Ձեր տված ին-  
տերվյուններին: Այժմ մենք սպասում ենք դեռևս մի քիչ  
ուշացող մամուլին, որպեսզի այնտեղ կարդանք այն հոգ-  
վածները, որոնք խոստացված են մեզ ու ամբողջ աշխար-  
հին:

Իմ ողջույնն ու լավագույն ցանկութունները Ձեզ և  
նորին գերագանցութուն Ալի Ֆուադ փաշային:

Մնամ Ձեզ անձնվեր՝

Ֆոն ԽենՏիդ

Նորին գերագանցութուն պ. գեներալ Հյուսնյու Էմիր  
Էրֆրիեթին:  
Ստամբուլ

# ԽԵՆՏԻԳԸ — ԷՐԴՄԱՆՍԴՈՐՖԻՆ ԵՎ ՎԵՐՄԱՆԻՆ<sup>1</sup>

Քաղ. բաժին VII 1234 դադանի

Ինձ ալցեղեց Բեռլինում հայտնի դ-ր Հարունը, որը որպես դոցենտ 17 տարի աշխատել է այստեղ Բարձրագույն տեխնիկական դպրոցում և այժմ նորից ապրում է Ստամբուլում: Ըստերեուլթին, այստեղի դեսպանություն և թուրքական ուրիշ ղեկավար շրջանների հանձնարարություններ նա ցանկանում էր իմանալ մեր դիրքը թուրանիզմի վերաբերմամբ: Դ-ր Հարունին հանձնարարվել էր դեսպան Գերեղեի անունից և թուրքական գլխավոր շտաբի պետ Ֆեվզի Չաքմաքի կողմից ինձ հաղորդել հետևյալը. երկուսն էլ հայտարարում են, որ նրանք անձնապես վերին աստիճանի շահագրգռված են այս հարցով, թեպետ և նախաժողովրդում չունին պաշտոնապես նրա օգտին հանդես գալու: Դիտավոր շտաբի պետը հայտարարեց, որ թուրանական հարցի հիման վրա կարող է կազմավորվել հարաբերություններ Թուրքիայի ու Գերմանիայի միջև: Ընդամին նա վստահացրեց, որ Թուրքիան երբեք պատերազմի մեջ չի մտնի Գերմանիայի դեմ: Միայն ներխուժման դեպքում նա ստիպված կլինի պաշտպանվել: Նա (գլխավոր շտաբի պետը) մեծ համակրությամբ է հետևում թյուրքական ժողովուրդների հանդեպ ունեցած մեր վերաբերմունքին: Ռազմագերիների շրջանում տարվելիք աշխատանքի համար նա պատրաստ է մարդիկ դնել մեր տրամադրության տակ:

Ձեկուցված է՝ պ. խորհրդական Մելիսերեի միջոցով  
պ. դեսպանորդ ֆոք Էրզմանողորֆին  
պ. կրտ. պետական բարոուզադ Վերմանին

ԽԵՆՏԻԳ

Բեռլին, 24 նոյեմբերի 1941 թ.

<sup>1</sup> Բնագրի վրա կա Վերմանի վիզան:

ԷՐՔԻԼԵԹԻ ԽԵՆՏԻԳԻՆ՝

Ստամբուլ, 27 նոյեմբերի 1941 թ.

ԳՆՆԵՐԱԼ

Խ. Է. ԷՐՔԻԼԵԹ

Խորարար և թանկագին դեսպանորդ.

Շատ շնորհակալ եմ Ձեզանից պ-րն վելի Մենդերի  
ինա Ձեր ինձ ուղարկած նոյեմբերի 17-ի բարեկամական  
տողերի համար և հօգուտ մեր ընդհանուր գործի մեր  
կողմից շատ գնահատվող Ձեր ջանքերի համար:

Ինձ համար շատ ցավալի է լսել, որ մեզ համար այն-  
քան ցանկալի Ձեր ուղևորությունը Ստամբուլ հետաձգ-  
վում է: Բայց Ձեր սիրալիր նամակում մատնանշված  
պատճառներն ինձ համար ոչ պարզ են և ոչ էլ հիմնավոր:  
Դուք մեզ համար ոչ թե հինգերորդ զորասյուն եք, այլ միայն  
բարեկամ, և մինչև իսկ շատ բարձր գնահատվող բարեկամ:  
Բացի այդ, ես չեմ կարողանում հասկանալ, ո՞վ է այդ  
օֆիցիոզ թուրքական կողմը, որն այդպես խորհուրդ է  
տվել Ձեզ հենց այժմ չգնալ Թուրքիա: Ես հավատացած եմ,  
որ դա անճիշտ կարծիք է և Ձեզ իզուր են խորհուրդ  
տվել չգնալ: Ես նույնպես հավատացած եմ, թե միակ  
մարդը, որն այդ տեսակետից կարող է ճիշտ խորհուրդ  
տալ, — դա նորին գերագանցություն դեսպան Ֆոն Պա-  
պենն է: Գնե՛րալ Ռոդեի միջոցով ես նրան տեղեկացրի  
Ձեր ենթադրվող ուղևորության մասին: Ներկայումս նա  
գտնվում է Անկարայում և կլինի Ստամբուլում միայն

<sup>1</sup> Ամբողջ նամակը ղրված է Խ. Է. Էրքիլեթի ձեռքով, գերմանե-  
րեն



5 XII (եթե նա դա, ես, իհարկե, այս մասին կխոսեմ նրա հետ և Ձեզ դարձյալ կգրեմ):

Նա շատ ցավում եմ Ձեր հիվանդության առթիվ: Հույս ունիմ, որ այժմ Դուք նորից միանգամայն առողջ եք:

Նորերս վիզա ստացած անձերից երկուսը—Մյուստեն-հիբ Ֆագիլը և էդիգե Քեմալը—կլինեն Ձեզ մոտ: Նրանց հանձնարարություն է տրված օգնել գերմանացիներին Ղրիմում և միաժամանակ օգտակար լինել Ղրիմի թյուրքերին: Այդ մասին ես գրել եմ պարոն պրոֆեսոր Բդրիսին և խնդրել եմ նրան թարգմանել Ձեզ այն ամենը, ինչ ես գրել եմ նրան: Մյուստենհիբը փաստաբան է, գրող, և վերջին ժամանակները նա մեզ մոտ դատախազ էր: Էդիգեն նույնպես լավ կրթված երիտասարդ է: Նրանք երկուսն էլ Ղրիմից են և շատ վստահելի: Նա խնդրում եմ երկուսին էլ ուղարկել Ղրիմ և նրանց օգտագործել այնտեղ գերմանա-թուրքական ընդհանուր շահերի օգտին: Նրանք գերմաներեն չգիտեն, բայց տիրապետում են ռուսերեն լեզվին և արագորեն կսովորեն գերմաներենը:

Սրտադին ողջունով

Միշտ հավատարմորեն Ձեզ անձնվեր՝

Խ. է. ԼՐՔԻԼԵԹ

ՊԱՊԵՆԸ—ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ<sup>1</sup>

Գ ա ղ Տ Ն Ի

Անկարա, 5 հունվարի 1942 թ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
 № Ա 6/42 գաղտնի  
 Արտաքին գործերի մինիստրությանը  
 Բեռլին

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Էնվանդակություն. Թուրքիայի դիրքը նոր տարվա  
 սկզբին:

Նրեք պատճեն

Պատերազմական գործողությունների ռազմաբեմի ընդարձակումն ամերիկա-ճապոնական կոնֆլիկտի ծագման հետևանքով և պատերազմի հայտարարումն առանցքի պետությունների կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգներին այստեղ առաջին հերթին խոր հիասթափության զգացում առաջ բերին:

Ինչպես և բազմիցս հաղորդել եմ, Թուրքական կառավարությունը հույս էր տածում, թե Բրիտանական կայսրության և առանցքի պետությունների միջև կոմպրոմիս կկայանա, որը, նրա կարծիքով, ղեռ հնարավոր էր, քանի Ամերիկան վճռականորեն չէր անցել հակառակ կողմը:

<sup>1</sup> Բնագրի առաջին էջի վրա կա զրոշմոց՝ «Զեկուցված է ֆյուրերին» և կանաչ մատիտով, ըստերևույթին էիտլերի ձեռքով գրված է, «Բ» տառը, կան վեյցզեկերի և վերմանի ինտեքիալները:

Deutsches Reich

Minister, A 5/12.

Ankara, den 5. Januar 1917.

Weichen Reichsliste

Politische Briefe

Inhalt: Die Stellung der Türkei zur Jahreswende.  
Drei Doppel.

Die Erweiterung des Kriegsbereichs durch den Ausbruch des amerikanisch-japanischen Krieges und die Kriegserklärung der Achsenmächte an die Vereinigten Staaten haben hier zunächst ein Gefühl großer Enttäuschung erzeugt, wie ich wiederholt berichtet habe, daß die türkische Regierung sich der Hoffnung auf einen nach ihrer Vorstellung möglichen Kompromiß hin, der zwischen den britischen Mächten und den Achsenmächten hätte gefunden werden können, solange Amerika nicht definitiv auf die andere Seite trat, stützte. Nicht nur alle Türen nach dieser Richtung hin geschlossen.

Die nächste Folge dieser Entwicklung war eine erneute Betätigung des unabänderlichen Willens der Türkei, den Krieg fortzuführen und sich von keiner Seite für einen stillen Frieden, die die Türkei nicht berühren, einzulassen.

Das ist der formale Stand der Dinge. In der Tat, bei näherer Betrachtung der Lage, die die Türkei in der Welt gesehen, einmal wenn die türkische Regierung davon auszugehen.

Es ist klar, daß - soweit die türkische Interessen in Frage steht - die Haltung der anglo-amerikanischen Blocke mit Sowjetrussland der türkischen Position gegenüber Betrachtung des Heiles gilt.

Die Türkei weiß aus ihrer langjährigen Geschichte zu genau, daß ihre nationale Existenz mit dem Ausbruch des deutsch-russischen Krieges auf dem letzten Versatz stand. Das ist die Tatsache, daß England sich unerschrocken entschlossen hat,

An die

Ausrichtungs Amt,

Reichsliste



Ներկայումս այս ուղղությամբ բոլոր ելքերը, ակնհերձորեն, փակված են:

Դեպքերի այսպիսի զարգացման մերձավորագույն ✓ հետևանքը եղավ այն, որ Թուրքիան կրկին անգամ ընդգծեց իր անփոփոխ ցանկությունը՝ դուրս մնալ պատերազմից և թույլ շտալ, որպեսզի որևէ կողմից իրեն ներգրավեն պայքարի մեջ Թուրքիային շվեդաբերդող որևէ շահերի համար:

Այսպես է դրությունն այսօր Ֆորմալ տեսակետից: Սակայն ամենի խորապես քննարկելիս այն հնարավորությունները, որոնք իրենց կնիքն են դնում համաշխարհային կոնֆլիկտի վրա, Թուրքիայի դիրքը նույնպես սկսում է որոշ երանգներ ընդունել:

Պարզ է, որ—որչափով բանը Թուրքիայի արտաքին քաղաքական շահերին է վերաբերում, անգլո-ամերիկյան բլոկի և Սովետական Ռուսաստանի միջև համաձայնությունը Թուրքական արտաքին-քաղաքական նկատառումներին որոշ թեքում է տալիս:

Իր երկար պատմական անցյալի օրինակով Թուրքիան շատ լավ գիտե, որ իր գոյությունը որպես ազգի ամենասերտ կերպով կապված է ղերմանա-ռուսական պատերազմի ելքի հետ: Այն փաստը, որ Անգլիան, ըստերևույթին, մձոնել է բոլշևիկյան Ռուսաստանի օգնությամբ նվաճելու նոր կարգ հաստատել, զգալի մի հարված է Ռեզլակի անհնարին է պատկերացնել, որ քաղաքակիրթի մի տերություն, որպիսին Բրիտանական կայսրությունն է, որը, ավելի քան մի ուրիշ կոնտինենտալ տերություն, պետք է որ բոլոր ջանքերը դորձադրեր պայքարելու այն սկրդբունքները պաշտպանելու համար, որոնք հազարամյա վաղեմություն ունին— լուրջ վերաբերվեր այդ դիտավորությանը: Անգլիայի այս հայտարարությունը պրոպագանդիստական մի միջոցառում են համարում բոլոր միջոցներով Սովետական Ռուսաստանի պայքարը պաշտպանելու նպատակով:

Թուրքիայի կարծիքով, անգլո-ամերիկյան բլոկի մասնակիցներից անհաղթելին Ամերիկան է: Հետևապես, առանցքի երկրները կկարողանային պատերազմի ելքն իրենց օգտին փոխել միայն Բրիտանական համաշխարհային կայսրությունը ջախջախելու ճանապարհով: Այն մասին, թե այսպիսի լիակատար ջախջախումը չի մտնում Թուրքիայի շահերի մեջ, ես մի անգամ չէ, որ մանրամասն ա-սել եմ: Որովհետև Թուրքիայի շահն ուղղված է դեպի ու-ժերի համասարակշռության պահպանումը Միջերկրական ծովում և բնավ երբեք դեպի Իտալիայի անսահմանափակ զերակշռումը, որն առանցքի երկրների լիակատար հաղ-թանակի հնարավոր հետևանքն է:

Մյուս հնարավոր ելքը Սովետական Ռուսաստանի օգ-նությունով անգլո-ամերիկյան բլոկի լիակատար հաղթա-նակն է: Թուրքիայի կարծիքով դա կնշանակեր Եվրոպայի լիակատար քայքայում, որովհետև ոչ Անգլիան, ոչ էլ ԱՄՆ-ն ի վիճակի չէին լինի ոչ կանգնեցնել ռուսական ճնշումը տեքիտոդիալ տեսակետից, ոչ էլ կանխել քաղ-ցած, պատերազմից տանջված և աղքատացած Եվրոպայի բոլշևիկացումը:

Այսպես ուրեմն, Թուրքիան իր արտաքին քաղաքա-կանություն մեջ ձգտում է այսուհետև ևս կոմպրոմիսի հնարավորություն գտնել, որի մեջ մտնելուն նա անպայ-ման պատրաստ կլինի անհրաժեշտ մոմենտին, հաշվի առնելով իր ռազմական ուժերի տեսակարար կշիռը:

Այսպիսի սխտուացիայի դեպքում հետաքրքիր է ա-վելի խոր քննել համաշխարհային դրություն և նրա հետա-գա զարգացման վերաբերյալ Թուրքական նկատառումների լինացքը:

Վաշինգտոնում և Մոսկվայում տեղի ունեցած կոնֆե-րենցիաները բավականաչափ պարզեցին, որ անգլո-ամե-րիկյան բլոկը համաշխարհային կոնֆլիկտի լուծումը կո-րոնի ոչ թե խաղաղ օվկիանոսում, այլ Եվրոպայում: Այս-տեղ նույնիսկ ենթադրում են, որ ԱՄՆ ու Անգլիան արդեն

ալժմ նշագծել են իրենց դիրքերը խաղաղ օվկիանոսում հետագա ժամանակի համար, ըստորում Բրիտանական կայսրությունն այս արել է, ըստինքյան հասկանալի է, այն նախադրյալով, որ խաղաղօվկիանոսյան դիրքերի կորստի դեպքում Հնդկաստանն ամեն տեսակ պայմաններում կարողանար պահպանված լինել և որ կայսրությունը Հեռավոր Արևելքում ունեցած իր դիրքի փոխարեն մեծ փոխհատուցում ստանար Աֆրիկայում: ԱՄՆ վերաբերմամբ հայտնի է, որ նրանք իրենց հեռու տարածված դիրքերը միշտ դիտել են որպես այնպիսիներ, որոնք որևէ կոնֆլիկտի դեպքում դժվար է պաշտպանել: Եթե կոնֆլիկտի վերջում հաջողվեր տանելի պայմաններով Ճապոնիայի ու Չինաստանի հետ տնտեսական համաձայնություններ կրնալ, ապա ԱՄՆ ձգտումն իրեն հուսալի կերպով ապահովելու՝ կբավարարվեր Հավայան դիրքը պահելով, միաժամանակ Բրիտանական կայսրությունից հետո ժառանգման իրավունքների մեջ մտնելով Վեստ-Ինդիայի բոլոր բաղաներում և Կենտրոնական ու Հարավային Ամերիկայում բացահայտորեն արտահայտված իմպերիալիզմ հաստատելով:

Եթե, այսպիսով, անգլո-ամերիկյան բոլոր լուծումը սպասում է Եվրոպայում, ապա նա այն կարող է գտնել միայն Ռուսաստանում մղվող ճակատամարտերի դաշտերում: Բայց սրանում անմիջական սպառնալիք կա Թուրքիայի ապագայի համար, և այդ պատճառով դեպքերի դարգացումը պատերազմական գործողությունների այս ուղղամարեմում բնականորեն կորոշի Թուրքիայի ապագա արտաքին քաղաքական դիրքը:

Երկու հնարավորություն կարող են դրդել Թուրքիային հրաժարվել չեղարկության սկզբունքից այս կամ այն կողմի օգտին.

1) Եթե առանցքի տերություններին հաջողվեր դարնանը որևէ վճռական ելք ձեռք բերել Ռուսաստանում, առանձնապես առաջ խաղաղ Կովկասի վրա և հարվածի



տակ դնել Բրիտանիային նաւթ մատակարարելը Պարսից ծոցից, ապա, Թուրքական քաղաքագետների կարծիքով, պարզ կլիներ, որ անգլո-ամերիկյան բլոկն ուշ շունի պատերազմը շահել նվրոպայում:

Այս նկատառումներից էլ, թերեւ, կծագեր կոմպրոմիսի հնարավորութիւն, որը Թուրքիան համաձայն կլիներ պաշտպանել, հենվելով իր ռազմական ուժերի տեսակարար կշռի վրա:

2) Ամեն մի փորձ վաղաժամ դրդելու Թուրքիային ակտիվորեն հայտաբերելու իր դիրքը—նրան այն պահանջն առաջադրելու ձեով, որ նա մասնակցի պատերազմին կամ մեզ իրավունք տա իր տերիտորիայով զորքեր անցկացնել— անխուսափելիորեն կհասցնէր Թուրքիայի անցմանը հակառակ կողմը:

Որքան ավելի է հետաձգվում ներկա պատերազմի վերջնական վախճանը, այնքան ավելի ուժեղանում է Թուրքիայի ձգտումը կոնֆլիկտից դուրս մնալու, որպէսզի ոչ մի պայմանով չգտնվի այն կողմում, որը տանուկ կտա:

Այս զգացումն ահագին ուժով տիրապետում է նաև Թուրքիայի հասարակական կարծիքի մեջ. այդ պատճառով պատերազմի մեջ մտնելը կառավարութիւնը կկարողանար պատճառաբանել միայն իր սուվերեն իրավունքների խախտումով:

Չափազանց բովանդակալից մի զրույցի մեջ, որ եւս մի քանի օր սրանից առաջ ունեցա պարոն պրեզիդենտի հետ, բազմիցս նշմարվում էին հավաստիացումներ, թե Թուրքիան վերին աստիճանի շահագրգռված է ռուսական հակայի ոչնչացումով և որ ոչ մի պրոպագանդա և ոչ մի ճնշում անգլո-ամերիկյան կողմից ի վիճակի չի լինի դրդել Թուրքիային անելու թեկուզ և ամենաաննշան մի քայլ, որն ուղղված լինէր ի վնաս մեր շահերի: Ընդհակառակը, պրեզիդենտն ընդգծեց, որ արդեն ներկա մոմենտին Թուրքիայի չեղոք դիրքը շատ ավելի ձեռնտու է առանցքի երկրների համար, քան Անգլիայի համար: Եթե Թուրքիան ակ-

տիվորեն կանգնած լինելը Անգլիայի դաշնակիցների կողմում, ապա անգլիական նավատորմը ներկայումս կաշտպանելու ռուսների հարավային թևը Սև ծովում և կգտնվել հարմար ճանապարհ Կովկասը պաշտպանելու համար:

Երբ ես պրեզիդենտին ասացի, թե Եվրոպան բոլշևիզմից պաշտպանելու համար մղվող հսկայական պայքարում ոչ մի եվրոպական պետություն չպետք է մի կողմ կանգնած մնա և որ թող նա մտածի, թե ինչ շափով թուրքական քաղաքականությունը թուլատրում է ակտիվորեն օգնություն ցույց տալ, նա ինձ պատասխանեց, թե այս հարցերը շատ լրջորեն ուսումնասիրվում են: Ես մատնանշեցի, որ եթե գարնանը մենք սկսենք հարձակումը Կովկասի վրա, ապա մեզ համար շատ արժեքավոր կլինել թուրքական ուժերի կենտրոնացումը ռուսական սահմանում:

Այն զրույցից, որ նորերս մինիստր Ալի Ֆուադն ունեցել է դեսպանորդ Ենկեի հետ, ըստերևոյթին, բղիճում է, որ թուրքական գլխավոր շտաբն ուսումնասիրել է այս հարցը և հաստատ դիտավորություն ունի առաջիկա գարնանը քննել այն մեզ համար բարենպաստ իմաստով: Յուրա ձմեռը թուրքական արևելյան գավառներում, հաղորդակցության ճանապարհների և մատակարարման հնարավորությունների համարյա լիակատար բացակայությունը թույլ է տալիս առհասարակ փոխել զորքերի դասավորությունը միայն ձյունահալքից հետո:

Երբ զրույցի վերջում պրեզիդենտը սկսեց ինձ հավաստիացնել, թե նա իր արտահայտությունների մեջ շատ ավելի հեռու դնաց, քան նրան պարտավորեցնում է օրեկտիվ շեղորոշությունը, նա, ակներևորեն, կամենում էր ցանկություն արտահայտել, որ առանցքի երկրների ալապիսի սնուղղակի պաշտպանությունը թուրքիայի կողմից ոչ մի դեպքում ժամանակից առաջ հայտնի չդառնա հակառակորդին:

Պ-րն Սարաջօղլուի և պ-րն Նումանի հետ վերջերս

իմ ունեցած զրույցներից դարձյալ բղխում է, որ Ռուսաս-  
տանի կողմից ամեն բան կարելի է սպասել: Եթե թուրքա-  
կան կառավարությունը նույնիսկ ոչ մի պաշտոնական  
հաստատում չստանար այն տերիտորիալ պահանջների վե-  
րաբերմամբ, որոնք քննարկվել են Իդենի և Ստալինի կող-  
մից, նա այնուամենայնիվ կենթադրեր, որ այսպիսի պա-  
հանջները համապատասխանում են բոլշևիկների իսկական  
մտադրություններին:

Վերին աստիճանի ցանկալի է, որ մենք այս բնագա-  
վառում թուրքական կառավարության հետ գաղտնաբար  
փոխանակեինք ամբողջ ինֆորմացիան: Թուրքական կառա-  
վարության վստահությունը մեր հավաստիացումների  
հանդեպ, թե մենք ոչ մի բան չենք ձեռնարկի, որը կարո-  
ղանար Թուրքիային բարոյապես անհարմար դրության մեջ  
դնել իր անգլիական դաշնակցի նկատմամբ, չպետք է  
խախտվի: Դեպքերի ընթացքն ինքը պիտի հնարավորու-  
թյուն տա թուրքերին ընտրելու այն մոմենտը, երբ նրանք  
համոզման կգան, թե դաշինքի պահպանումն Անգլիայի  
հետ անհամատեղելի է որպես ազգի իրենց սպագայի ա-  
պահովման հետ:

Այստեղ հաստատված կարծիքով համաշխարհային  
կոնֆլիկտը պրոպագանդայի նպատակով օգտագործելու  
համար քիչ հնարավորություններ կան, որովհետև ներկայումս  
բոլոր ժողովուրդներն ու ազգերը որոշ տեսակետ են գրավել:  
Ընդհակառակը, այստեղ առաջին հերթին խորհրդածում  
են, թե առանցքի տերությունների համար անհրաժեշտ է  
անցնել եվրոպայում հաստատելիք նոր կարգի իրականաց-  
մանը, որի մասին դեռևս միայն պրոպագանդայի միջոցով  
են ազդարարել: Բոլոր շրջաններում հույս են հայտնում, որ  
աբգեն այժմ կհաջողվի նոր եվրոպային մի այնպիսի ձև  
տալ, որը, մի կողմից, ռազմական տեսակետից կամբա-  
պնդի առանցքի տերությունների նյութական տեսակարար  
կշիռը, իսկ մյուս կողմից—հնարավորություն կտա Ամերի-  
կայի Միացյալ Նահանգներում գոյություն ունեցող ներ-



բին գործող օպոզիցիային հաջողութեամբ պայքարել Ռուզ-վելտի և նրա նպատակների դեմ: Արտաքին գործերի մի-նիստրը դեռ երկել ինձ ասաց. Չերչիլը վաշինգտոնում ա-րած հայտարարութեան մեջ լիակատար սուվերենիտետ է խոստացել եվրոպական բոլոր ժողովուրդներին (հայկանո-րեն, բաց-սոսութեամբ մերձբալթյան երկրներին): Առանցքի երկրները հայտարարել են նույնը: Ֆյուրերը պետք է որ աշխարհում անցնեն այն բանին, որպեսզի ներկայացնի «կա-տարված փաստերը» (fait accompli): Դա առանձնապես կարևոր կլինեն ֆրանսիական հարցում, որովհետև Աֆրի-կան կհանդիսանա ճակատամարտի այն դաշտը, որը վրձ-ռական ազդեցություն կունենա Եվրոպայի ընդհանուր դրութեան վրա:

Այս զրույցի առթիվ արտաքին գործերի մինիստրը շոշափեց նաև Ռուզվելտի այն հայտարարությունը կոնգ-րեսին, որի մեջ դարձյալ հրամցվում է այն հեքիաթը, որ իբր թե ֆյուրերը համաշխարհային տիրապետության իր պլանները ուզում է տարածել նաև Հարավային Ամերիկա-յի վրա: Պ-ն Սարաջոզլուի կարծիքով շարունակ էրկնվող այս պնդումները պետք է վերադրել էմիգրանտների հրա-տարակած բազմաթիվ գրքերի ազդեցությանը, որոնց - մեջ հաճախ պատմվում է այս պլաններին նվիրված ինտիմ խոսակցությունների մասին: Գերմանական պրոպագանդան պետք է որ ջանար Եվրոպայի փաստական քաղաքական կառուցման միջոցով հակակշիռ ստեղծել սրան:

Ամփոփելով, հետևյալը կարելի է ասել. թուրքական կառավարության հավատը գերմանական ղեկի հաղթանա-կի նկատմամբ սասանված չէ: Բայց երկշուղ են կրում, որ եթե կոնֆլիկտը երկարի, ապա կարող է սկսվել ուժերի չափազանց մեծ մանրատում և ջլատում, որը հարցականի տակ կդնի վերջնական արդյունքը:

Հակառակ կողմի համար ամենամոտ ժամանակով  
հնարավորութիւն չի նախատեսվում կոնֆլիկտը վճռողա-  
կան շրջադարձի հասցնելու: Այս պայմաններում Թուր-  
քիայի արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ այս  
կամ այն որոշումը կլինի ռազմական իրադրութեան հե-  
տագա դարգացման հետևանքը:

ՊԱՊԵՆ





ՎԵՐՄԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԵՆԵՐԱԼ ՎԱՐԼԻՄՈՆՏԻ Ն  
ՈՒՂՂՎԱԾ ԳՐՈՒԹՅԱՆ ԿՅՈՒՄՈՎ<sup>1</sup>

Գ ա ղ Տ Ե Ի

Յետին, 23 հունվարի 1942 թ.

Հարակից գրությունն իմ տեսակետից ընդհանուր առմամբ տալիս է Թուրքիայի բռնած դիրքի բացառիկ ճիշտ բնութագիրը: Առանձնապես ճիշտ է այն պնդումը, թե Թուրքիայի համար անտարբեղ չի կարող լինել այն ամենը, ինչ մենք ձեռնարկում ենք արաբական և թուրանական հարցերում: Սրա առնչությամբ նաև նախատեսվում է, որ Թուրքիան իրազեկ դարձվի, օրինակ, Արաբիան ազատ հայտարարելու մասին նախքան այդ ազատությունը պաշտոնապես կազդարարվի: Նմանապես և հետագայում, արաբական տարածություն ստեղծելիս համագործակցությունը Թուրքիայի հետ չափազանց անհրաժեշտ կլինի:

Սակայն մի շարք պատճառներով տվյալ մոմենտը բոլորովին հարմար չէ այս հարցի առթիվ Թուրքիայի հետ բանակցություններ վարելու կամ հարաբերություններ ունենալու համար:

Զեկուցված է.

1) Պարոն պետական քարտուղարին:

2) Քաղաքական բաժնի պետի միջոցով Քաղաքական բաժնի 7 ռեֆերենտուրային:

Խնդրում եմ կազմել Անկարա ուղարկվելիք ցուցման

<sup>1</sup> Բնագրի վրա կա Վեյցզեկերի վիզան:

նախագիծը մոտավորապես վերն ասվածի ոգով: Հարակից  
գրության պատճենը նույնպես ուղարկել Անկարա:

ՎԵՐՄԱՆ

2 դեկտեմբերի 1941 թ.

## ԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՊՈՆ ԳԵՆԵՐԱՎ, ՎԱՐԼԻՄՈՆՏԻ ՀԱՄԱՐ

1. Թուրքական կառավարությունն ուզում է, որ իր  
երկիրը խուսափի պատերազմին մասնակցելուց, բայց,  
մյուս կողմից, նրա համար ավելի ու ավելի դժվար է դի-  
մանալ Թուրքիայի համար առավելություն ձեռք բերելու  
գալթակղության առաջ այն դեպքում, երբ իրերի գրություն-  
ներ կփոխվի: Կառավարության կողմից ցուցաբերվող հան-  
դուրժողականության պարագայում գեներալ էրբիլթը  
պրոպագանդա է ծավալել, որի նպատակն է հետաքրքրու-  
թյուն դարձնել թյուրքական ծագում ունեցող ժողո-  
վուրդների հանդեպ, պրոպագանդա, որը ցույց է տալիս,  
թե ուր են մղում թուրքական կառավարությանը կամ ուր  
նա ինքը թույլ է տալիս իրեն մղել:

Թուրքիան չափազանց առաձգականորեն է մեկնաբա-  
նում իր պայմանագրային պարտավորություններն Անգլի-  
այի վերաբերմամբ, բայց հազիվ թե նա սիրտ անի բանը  
հասցնել այնպեղ, որ այդ պայմանագիրը խախտի: Պրե-  
զիդենտի կողմից իր ճառերից մեկում արված ակնարկը  
հաշտություն կնքելու գործում միջնորդ լինելու մասին՝  
պետք է, ամենայն ակներևությամբ, կամ ծառայեր այն  
բանին, որպեսզի հաշտության կնքման առթիվ կրած նման  
նեղությունների համար իբրև փոխհատուցում ստացվեն  
որոշ առավելություններ կամ թե հնարավոր դարձներ ա-  
ռանցքի տերությունների կողմն անցնելը, որը Թուրքիա-  
յին առավելություններ կտա պատերազմական գործողու-  
թյուններին նրա մինիմալ մասնակցության դեպքում:

2. Անգլիան ոչինչ չի կարող առաջարկել Թուրքիային ոչ տերիտորիալ, ոչ էլ որևէ այլ տեսակետից: Մերիան մտցված է ազատագրված դեմոկրատական պետութիւններին թվի մեջ, մյուս արաբական երկրներին նույնպես տրված էին խոստումներ:

Ժամանակ առ ժամանակ երևան եկող այն քաղաքականութիւնը, որն ուղղված է Կովկասին ինքնուրույնութիւն տալուն, լրջութեամբ չի ընդունվում, որովհետև այն կլինե՞ր ռուսական դաշնակցի վերաբերմամբ ունեցած պարտավորութիւնների չափից դուրս բացահայտ խախտում: Քրդական անկախ պետութեան օգտին մղվող պրոպագանդան շոշափեց Թուրքիայի ամենազգայուն տեղերից մեկը և մեծ երկյուղներ առաջ բերեց:

3. Գերմանիան իր ձեռքին է պահում հունական կըղզիները, որոնք գտնվում են Դարդանեւլի առաջ և Թուրքիայի համար, որպես միջերկրածովային տերութեան համար, մեծ նշանակութիւն ունեն: Թուրքիան ենթադրում է, թէ Գերմանիան կնվաճի Կովկասը և կորոշի կովկասյան ժողովուրդների թախտը, որոնք ծագումով իրենց մեծամասնութեամբ մուսուլմաններ են և մասնակիորեն թուրքեր: Դա կանդրադառնա նաև Կասպից ծովից արևելք ապրող թուրքական ժողովուրդների վրա, որոնց վիճակով Թուրքիան շահագրգռված է: Բացի այդ, Գերմանիան որոշ քաղաքականութիւն է իրականացնում արաբական տարածութիւնում, որի նկատմամբ նույնպես Թուրքիան չի կարող անտարբեր լինել:

4. Թուրքական քաղաքականութիւնը Գերմանիայի վերաբերմամբ Ռուսաստանի վրա կատարվող արշավանքի պրոցեսում ավելի ու ավելի բարեկամական է դառնում: Անպիսի դեպքեր, ինչպես լիբիական արշավանքը և հարձակման դժվարութիւնները ռուսական հարավային ռազմաճակատում, ժամանակավորապես ուժեղացնում են չեղորոշութիւն պահպանելու տենդենցը, որ, ամենայն հավանականութեամբ, չի նշանակում, թէ Թուրքիան կհրաժարվի



իր քաղաքականության շրջադարձից Գերմանիայի կողմը կամ թե կվերադառնա անգլիական ազդեցության ոլորտը, որովհետև անգլիական բանակը, որը գտնվում է հյուսիս-աֆրիկական և արաբա-իրանական տարածություններում, բոլոր պարագաներում ուժեղ կերպով կթուլանա լիբիական արշավանքում: Ավստրալիայից ու նոր Զելանդիայից համալրումներ սպասելն իզուր է: Թուրքիայում դժվար է դատել այն մասին, թե կկարողանա՞ արդյոք Անգլիան մայրերկրից ուժեր բերել հասցնել: Այսպիսով, Թուրքիան կարծում է, որ ամենամոտիկ ամիսներին անգլիացիների կողմից հարձակման վտանգը, ըստերևույթին, բացառված է: Միակ բանը, որը նրան երկյուղ է ներշնչում, դա Իտալիայի դրությունն է, որի ներքին թուլությունը ընդունվում է բուլղոթի կողմից:

5. Մինչև այժմ Թուրքիային չէր հաջողվում կապ հաստատել հակաանդլիական խմբավորումների հետ արաբական երկրներում։ Այն բանակցությունները, որոնք ամենամոտիկ ժամանակներս տեղի կունենան Բեռլինում արաբական հարցի շուրջը, Թուրքիայի մեջ առաջ կբերեն մեծ հետաքրքրություն և որոշ նյարդայնություն։ Որպես հարեւան մեծ տերություն նա իրեն իրավասու է համարում, որ դոնե իրազեկ դարձվի այդ բանակցությունների մասին, եթե նա չկարողանա էլ հիմնավորել դրանց մասնակցելու հավակնությունները։ Այսպիսով, հնարավորություն է ներկայանում խոսել Թուրքիայի հետ գործերի հետագա ընթացքի մասին, ըստորում այդ պետք է անել, քանի դեռ Ռուսաստանում պատերազմական դործողությունները չեն փոխադրվել Վովկաս։ Ռուսաստանի դեմ պատերազմին մասնակցելը, որը կարտահայտվեր բարհաճ դիրքով և ուրոշ առավելություններ տրամադրելով, շատ ժողովրդական կլինեի բանակում և բնակչության շատ շրջաններում, ըստ-կլինեի բանակում և բնակչության շատ շրջաններում, ըստ-կլինեի և այս հարցը կարելի կլինեի ազատորեն քննարկել Թուրքիայի հետ այն բանից հետո, երբ մենք կտեղեկաց-

նենք նրան արաբական հարցի շուրջը տարվող բանակցութիւնների մասին:

6. Աթաթուրքի ժամանակվա Թուրքիան կառուցված էր զուտ ազգային սկզբունքի վրա. զուտ թուրքական մարզերի սահմաններից դուրս գտնվող մուսուլմանական կամ թուրքական շահերը, որոնք քննարկվում էին երիտասարդ թուրքերի ժամանակ, այլևս որևէ մեկին չեն հետաքրքրում: Թուրքիան առայժմ ոչ մի բանով չի ցուցադրել, թե ինքը տերիտորիալ ձեռքերումների է սուսսում: Որոշ նշաններ կկարողանային խոսել հօգուտ այն բանի, որ տերիտորիալ պահանջանքների կամ գոնե ազդեցության որոշ սփերա ստեղծելու համար իբրև ելակետ կարող է օգտագործվել ռեզուցիոն շարժումն Իրանի հյուսիսում ապրող աղբիւշանցիների մեջ: Իսկ առհասարակ քարոզվում է Ղրիմում, Հյուսիսային Կովկասում, ռուսական Ադրբեջանում անկախ կամ գոնե արտաքուստ անկախ թուրքական պետական գոյացումներ ստեղծելու գաղափարը, ըստորում վերջին երկուսում—որպես կովկասյան պետութայն մասեր, նաև համանման պետական գոյացումներ Կասպից ծովից արեւելք:

7. Վերը շարադրված նկատառումները հիմք են տալիս Թուրքիայի հետ բանակցութիւններ վարելու համար: Թուրքական կառավարութիւնը, իհարկե, չի ակնկալում, թե ինքը որևէ առավելութիւններ կստանա առանց համապատասխան փոխադարձ ծառայութայն իր կողմից: Շատ կասկածելի է, որ Թուրքիայի մասնակցութիւնը պատերազմին ցանկալի լինե՞ր, հաշվի առնելով աշն գինը, որ դրա համար հարկ կլինի վճարել: Բանակցութիւնները պետք է որոշեն, թե որչափ Թուրքիան պատրաստ է բարյացակամ շեղոքութայն հասկացողութիւնը ընդարձակել և դրանով իսկ գերմանական ռազմական հրամանատարութայն համար հեշտացնել մուտքը դեպի արաբական տարածութիւնն ու Սուեզի ջրանցքը:

ՊԱՊԵՆԸ—ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ<sup>1</sup>

Գ ա ղ Տ Ե Ի

Պատճեն

Անկարա, 16 փետրվարի 1942 թ.  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ.

ԳԵՐԾԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 71/42 զաղտնի

Էռվանդակություն. Թուրքերի առաջարկները:

Իմ № 47/42 զաղտնի զեկուցագրում, ինչպես և փետրվարի 10-ի № 206 հեռագրում ես արդեն փորձել եմ բնութագրել այն սկզբունքները, որոնք բնորոշում են Թուրքիայի յայժմյան քաղաքականությունը: Բոլոր նկատառումների կենտրոնում կանգնած է մի ձգտում՝ հեռու մնալ պատերազմից, որպեսզի մարդկային նոր կորուստներով չթուլացվի Թուրքիայի աճող ռազմական պոտենցիալը և լիովին զինված գտնվել պատերազմի ամեն մի ելքի դեպքում: Մինչև անցյալ ամառը Թուրքիան զլխավորապես երկյուղ էր կրում առանցքի տերությունների լիակատար հաղթանակի հնարավորությունից ու միջերկրածովյան տարածության արևելյան մասն Իտալիայի տիրապետության տակ անցնելուց և հույս ուներ դրան հակակշիռ գտնել անգլիացիների կողմում: Բայց պատերազմը Սովետական Միության դեմ միանգամայն փոխեց պատկերը:

<sup>1</sup> Բնագրի վրա կա Վերմանի ձեռքով կատարված հետևյալ նշագրումը, «ես հանձնեցի (բառն անընթեռնելի է) մինիստերիալ—գեկտոր Վիլին» և Վերմանի վիզան:



Ինչպես ես արդեն հաղորդել եմ, այժմյան դրությունը բնութագրվում է այն մտահոգությամբ, թե անգլո-ամերիկյան ուժերի օգնությամբ Սովետական Ռուսաստանը նորից կյանքի կոչվի և պատերազմի անբարեհաջող ելքի դեպքում, Կրիպսի գուշակությանը համապատասխան, կթելադրի Եվրոպայում նոր կարգի օրենքներ: Նլնեղով սրանից, Նոմանն առաջարկեց իր մինիստրին ու պրեմյեր-մինիստրին իրեն լիազորություններ տալ, որպեսզի ինձ հետ քննարկի այն հարցը, թե ինչ ճանապարհով կարելի է ընդարձակել գերմանա-թուրքական հարաբերությունները, ամրապնդել դրանք վստահության հիման վրա, ընդամին չբարդացնելով Թուրքիայի հարաբերությունները Սովետական Միության հետ և չվատացնելով նրա (Թուրքիայի) հարաբերությունները դաշնակիցների հետ:

Ինձ առաջարկված զրույցները տեղի ունեցան այս օրերս: Նոմանը Թուրքիայի դրությունը բնութագրեց այն ոգով, ինչպես ես արդեն համառոտակի այդ ուրվագծել եմ ներկա զեկուցման սկզբում: Նա ավելացրեց, որ առանցքի երկրները շահագրգռված են տեսնել Թուրքիային ըստ հնարավորության ռազմական տեսակետից ավելի ուժեղ այն հաշվով, որպեսզի նա կարողանա դեմ կանգնել անգլո-ամերիկյան հնարավոր ճնշմանը: Ճիշտ է, լենդ-լիդի օրենքով Թուրքիային խոստացված են զգալի մատակարարումներ: Թե ինչ չափով դրանք կարող են իրականանալ, կախված է տրանսպորտի դրությունից, որը, ինչպես մեզ հայտնի է, բացառիկ կերպով վատ է: Է՛լ ավելի կարևոր են Թուրքիայի համար հացահատիկի ու պարենամթերքի մատակարարումները, որոնցից նա ոչ մի դեպքում չի կարող հրաժարվել: Սակայն Թուրքական բաղադրականությունը պահանջում է, որ Գերմանիայի կողմից հսկակշիռ ստեղծվի այսպիսի եղանակով ընդարձակվող անգլո-ամերիկյան ազդեցությանը:

Նրա առաջարկը կայանում է հետևյալում. վերականգնել վարկային համաձայնությունը, որն իր ժամանակին

լինել է մինիստր Ֆոնկի հետ, բայց վավերացված չլինելով մոռացության է տրվել. այդ համաձայնությամբ նախատեսված գումարներով Թուրքիային ռազմանյութեր մատակարարել: Այդ միջոցառումը չպետք է դիտել պրոպագանդայի տեսակետից, այն ավելի շուտ պետք է դիտել որպես Թուրքիայի դեպի քաղաքական նկատառումների արտահայտություն:

Այս առաջարկը քննարկելիս Նումանն առանձնապես ընդգծում էր հետևյալը. նրա առաջարկը թուրքական քաղաքականության հանդեպ վստահության հարց է, որովհետև ներկա մոմենտին Թուրքիան ի վիճակի չէ ի պատասխան որևէ կոնկրետ բան խոստանալ, ինչպես ես իմ կողմից առաջարկեցի: Ռազմական իրադրության քննումը բավական է, որպեսզի առանցքի երկրներն իրենց համար պարզեն ռազմական տեսակետից ուժեղ Թուրքիայի նշանակությունը, որն ամեն մոմենտի պատրաստ է կլինի հաջողությամբ պաշտպանվել անգլո-ամերիկյան ճնշման դեմ: Ճիշտ է, գերմանական կողմը կարող է ապացուցել, որ այս նպատակի համար կարիք չկա Թուրքիային ռազմանյութեր մատակարարել, որովհետև եթե 1942 թ. ամառը գերմանական բանակը Կովկասում գտնվի, ապա դա բավականաչափ երաշխիք կլինի և գերմանական բանակն ամեն մոմենտի որպես Թուրքիայի դաշնակից կկարողանա դուրս գալ անգլո-ամերիկյան զինված ուժերի դեմ: Բայց Ռուսաստանի լիակատար պարտության և Կովկասում գերմանացիների հաղթական առաջխաղացման դեպքում գերմանական քաղաքականության համար, նրա կարծիքով, մեծ նշանակություն կունենա այն գիտակցությունը, թե շատ ուժալու գերմանական թևին չի սպառնա թուրքական տիրատորիայի կողմից անակնկալ հարձակման վտանգ:

Նս, իհարկե, պարզաբանեցի պ-րն Նումանին, որ նրա սպասած լայն մասշտաբով գերմանական ռազմանյութերի մատակարարումը Թուրքիային պետք է ունենա ինչ-որ քաղաքական էկվիվալենտ: Բնականաբար, մենք սկզբում

կընենք այսպիսի պլանի տեսնիկապես իրադործելիության հարցը: Եթե այդ իրադործելի լինի, ապա իմ կառավարությունը, անկասկած, կպնդի որոշ էկզիվալենտի վրա, որը ես անձամբ, վաղօրոք շնախագուշակելով իմ մինիստրի որոշումը, տեսնում եմ հիմնականում «Եվրոպան և Սովետական Ռուսաստանը» պրոբլեմի վերաբերմամբ թուրքական դիրքի կոնկրետացման մեջ:

Նումանը պատասխանեց, որ ինչպես պարոն Սարաջօղլուն, այդպես էլ ինքը իրենց անդլիական բարեկամների մեջ ամենաշնչին կասկած անգամ չեն թողել Թուրքիայի ցանկության նկատմամբ՝ տեսնելու Սովետները պարտված: Թուրքիան երբեք և ոչ մի տեսակետից չի կարող ցանկանալ, որ Սովետական Ռուսաստանը վճռողական ազդեցություն ունենա Եվրոպայում նոր կարգ հաստատելու վրա այն դեպքում, եթե Ռուսաստանը հաղթող դուրս գա: Միևնույն ժամանակ թուրքական այս հայացքների կոնկրետացումը կներկայացնե՞ր այժմ քաղաքական մի ակտ, որը Թուրքիան չի կարող իրեն թույլ տալ: Իսկ ինչ վերաբերում է զինված ուժերի դասավորությունը, ապա նա ինձ հավաստիացնում է, որ Թուրքիան լիովին հաշվի կառնի նոր իրադրությունը: Դա նույնպես կնշանակի մեզ համար աջակցություն, հաշվի առնելով կովկասյան արշավը:

Դիսկուսիայի պրոցեսում մենք վերջիվերջո համաձայնություն եկանք, որ ես նրա առաջարկի մասին կզեկույցեմ արտաքին գործերի պ-րն մինիստրին, ինձ իրավունք վերապահելով հետագա բանակցությունների համար ընդհանուր հիմք գտնելու: Նա, նումանը, ոչ մի իլյուզիա չի կառուցում այն մասին, թե այս տեսակ նախագծի հրապարակումն անբարենպաստ կանդորադառնա անգլո-թուրքական հարաբերությունների վրա, բայց նա պատրաստ է ասել անգլիացիներին. «Մենք այս համաձայնությունը կնքեցինք Դերմանիայի հետ, որովհետև մենք ուզում ենք ռազմական տեսակետից նախապատրաստված լինել ամեն մի հնարավոր դեպքի համար—նույնիսկ այն դեպքի համար, եթե հար-



ձակում տեղի ունենա անգլիացիների ու ամերիկացիների  
կողմից:

Ընդ սմին ներկայացնելով Նումանի առաջարկը, կու-  
լենայի ավելացնել, որ ես խորհուրդ եմ տալիս ամենից  
առաջ քննել ռազմական մատակարարումների իրականաց-  
ման տեխնիկական հնարավորության հարցը: Չնայած ներ-  
կայումս քաղաքական էկվիվալենտ ձեռք բերելու ակներև  
դժվարություններին, ես Նումանի առաջարկը դիտում եմ  
որպես բարենպաստ հնարավորություն՝ թուրքերի հետ և  
առանձնապես թուրքական գլխավոր շտաբի հետ ավելի  
մոտիկ հարաբերություններ ստեղծելու:

Ես շնորհակալ կլինեի Ձեր կողմից սկզբունքային ցու-  
յումներ ստանալու համար:

ՊԱՊԵՆ

Գ ա ղ ս ն ի

ՀԵՌԱԳԻՐ

Անկարա, 7 մարտի 1942 թ.

Ստացված է 7 մարտի 1942 թ. 13 ժ. 50 բ.

№ 355

Քաղ. բաժնին VII 307 գաղտնի

Ի լրումն 6-ի № 351 հեռագրի

1. Ռուսը երեկ ձերբակալված է Կեսարիայում:

2. Գլխավոր հյուպատոսարանի կողմից ուռա Պավլովին կամավոր կերպով հանձնելու ժամկետը երկարացված է մինչև վաղը առավոտ, որից հետո տեղի կունենա ձերբակալում:

3. Մամուլի բաժնի պետը երեկ գիշերը հեռախոսով զանգահարեց, որպեսզի իմանար ուռաի վերաբերմամբ ձեռք առնված ոստիկանական միջոցների մանրամասնությունները: Խնդրում եմ տեղեկացնել կոմպետենտ ինստանցիաներին, որ այս տեսակ հարցումներն աննպատակ են, որովհետև գործը լիակատար կերպով պարզելու շահերից ելնելով դեսպանությունը հեռախոսով ոչ մի տեղեկանք չի կարող տալ:

ՊԱՊԵՆ

ՀԵՌԱԳԻՐ

Անկարա, 9 մարտի 1942 թ.

Ստացված է 9 մարտի 1942 թ. 11 ժ. 35 ր.

№ 363

Քաղ. բաժնին VIII 308 գաղտնի

Ի լրումն 6-ի № 355 հեռագրի

Նումանն ինձ հաղորդեց, որ երեկ ուսը գլխավոր հյուպատոսարանի կողմից կամավոր կերպով հանձնվեց այն բանից հետո, երբ գլխավոր հյուպատոսարանը շրջապատվեց հետևակի մի գումարտակով և ուրիշ ելք չէր մըպատվեց հետևակի մի գումարտակով է, բայց այս ժամին նու՛մ: Նա, իհարկե, ամեն ինչ ժխտում է, բայց այս ժամին նրան երրորդ աստիճանի<sup>1</sup> հարցաքննության են ենթարկում: Ժուռնալիստների հաղորդումներին հակառակ, ուսական պեսպանը Մոսկվա չի մեկնել:

ՊԱՊԵՆ

<sup>1</sup> Նկատի է առնվում խոշտանգման զործագրումով կատարվող հարցաքննությունը:



ՎԻԼԸ— ՌԵՔԵՆՏՐՈՊԻՆ՝

Պ ա ղ ս ց ի

Բեռլին, 17 մարտի 1942 թ.

ԱՌԵՎՏՐԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՃՆԻ ՊԵՏ

62 դադանի

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԿՐՈՒՊՊԻ 7,5 ՍՄ.  
20 ԴԱՇՏԱՅԻՆ ԶԵՆԻՏԱՅԻՆ ՀՐԱՆՈՒ ԵՎ ՆՐԱՆՅ ՀԵՏ  
100 ՀԱԶ. ԱՐԿ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գեներալ-ֆելդմարշալ Կեյտելը պարոն դեսպան Ռիտ-տերին հաղորդեց, որ Ֆյուրերը կուզենար խոսել արտաքին գործերի պարոն մինիստրի հետ Թուրքիային, որպես նախ-նական մատակարարումներ, քրոմահանքի հնարավոր մա-տակարարումների փոխարեն 20 դաշտային զենիտային հրանոթ մատակարարելու նպատակահարմարության մա-սին:

Կրուպպի ֆիրմայի հետ նախապատերազմյան պայ-մանագրով նախատեսված 7,5 սմ տրամաչափի 108 դաշ-տային զենիտային հրանոթի և նրանց հետ 6400 արկի մատակարարումները պատերազմ սկսվելու կապակցու-թյամբ թերակատարված են: Կրուպպի ֆիրման թուրքերին պարտք էր մնացել 20 հրանոթ, որոնք պատրաստի վիճա-կում գտնվում են գործարաններում. դրանց օգտագործումը

1 Բնագրի վրա կա Վերմանի վիզան:

գերմանական բանակում դժվարին է, որովհետև նրանք չեն համապատասխանում սպառազինման հանրաճանաչ տիպին։ Թուրքիայի հետ Կլոդիուսի 1941 թ. հոկտեմբերի 9-ի պայմանագրում նորից խոստացվել էր այդ 20 հրանոթը մատակարարել ներառյալ 100 հազ. արկ, որոնք հարկավոր է նորից պատրաստել։ Արա համար Կրուպայի ֆիրման պետք է նոր պայմանագիր կնքի։ Կառավարական պայմանագիրը չի նախատեսում այս հրանոթների ու արկերի մատակարարման կապը թուրքական հակամատակարարումների հետ, ման կապը թուրքական հակամատակարարումների հետ, այդ թվում և քրոմահանքի։ Ծիշտ է, զինված ուժերի գերա-  
զույն հրամանատարությունը սկզբում դիտավորություն ուներ Կրուպայի ֆիրմայի մասնավոր բանակցություններին  
այնպիսի ուղղություն տալ, որպեսզի հրանոթների և  
պատրաստման ենթակա արկերի մատակարարումը նախա-  
տեսված լինի 1943 թ. հունվարի 15-ից հետո, որովհետև  
կառավարական պայմանագրով մենք մինչ այդ ժամանակ  
որպես հակամատակարարումներ կկարողանանք քրոմա-  
հանք ստանալ։ Սակայն դեսպանությունը Անկարայում  
հանք ստանալ, որ հրանոթները մատակարարվեն ավելի վաղ,  
միջնորդեց, որ հրանոթները մատակարարվեն ավելի վաղ,  
որովհետև դրան մեզ պարտավորեցնում է պայմանագիրը,  
որովհետև դրան մեզ պարտավորեցնում է պայմանագիրը,  
որովհետև դրան մեզ պարտավորեցնում է պայմանագիրը,  
որովհետև դրան մեզ պարտավորեցնում է պայմանագիրը,  
որովհետև դրան մեզ պարտավորեցնում է պայմանագիրը,

հրանոթներ մատարարելու հարցը: Թերևս այդ պետք է անել նախնական մատակարարումների ձևով Թուրքիայից մի քիչ ուշ քրոմահանք ստանալու հաշվին: 20 հրանոթի արժեքը կազմում է մոտ 2 միլիոն ռայխսմարկ, իսկ 100 հազ. արկը կարժենա մոտ 12 միլիոն ռայխսմարկ: Եթե պայմանագիրն ապրիլին կնքվի, ապա նոր պատրաստվող արկերի մատակարարումները կարելի կլինի սկսել 1942 թ. դեկտեմբերից: Պայմանագրի ամենաարագ կնքումը հրանոթների հետագա մատակարարումով այն առավելությունը կունենար, որ պայմանագիր կնքելիս պատրաստման ենթակա արկերի համար որպես կանխավճար մենք կստանայինք 30 տոկոսը, որը կկազմի մոտ 4 միլիոն ռայխսմարկ, իսկ հրանոթների մատակարարման համար—նրանց արժեքը, որն արտահայտվում է մոտավորապես 2 միլիոն ռայխսմարկով, ընդամենը մենք կստանայինք 6 միլիոն ռայխսմարկ: Այս գումարով մենք կկարողանայինք հենց այստեղ Թուրքիայում գնել մեզ չափազանց անհրաժեշտ ստրատեգիական հումք, ինչպես, օրինակ, պղինձ և բամբակ: Այն 8 միլիոն մարկով, որը պարտավոր կլինի մեզ վճարել Թուրքիան արկերի մատակարարման համար, մենք եկող տարվա սկզբից, բացի վերը հիշատակված ստրատեգիական հումքից, կկարողանայինք գնել նաև քրոմահանք 45 հազ. տոննա կոնտինգենտի սահմաններում, որը նախատեսված է 1943 թ. հունվարի 15-ից մինչև մարտի 31-ը ժամանակաշրջանի համար:

Տնտեսական տեսակետից այս կարգի պայմանագիրը հաշվի առնելով Թուրքիայի կարևոր հակամատակարարումները, մեզ համար շատ բարենպաստ կլիներ, մանավանդ որ հրանոթները պատրաստ են առաքման համար և մենք միևնույն է մեր բանակում դրանք օգտագործել չենք կարող: Պայմանագրի շուտ կնքումը նաև ցանկալի է քաղաքական տեսակետից էլ, որովհետև հապաղումը կարող է թուրքերի մեջ կասկած առաջ բերել 1941 թ. հոկտեմբերի 9-ի պայմանագիրը կատարելու մեր ցանկության նկատմամբ:



Զինված ուժերի գերազույն հրամանատարության  
պաշտական տնտեսության և սպառազինության վարչության  
նը ղեկերալ-ֆելդմարշալ Կեյտելի անունով ներկայացրած  
հուշագրում նույնպես արտահայտվում էր հրանոթների մա-  
տակարարման օգտին: Գեներալ-ֆելդմարշալ Կեյտելը  
խնդրում էր իրեն տեղեկացնել ֆյուրերի մոտ արտաքին  
գործերի պարոն մինիստրի արած ղեկուցման արդյունքների  
մասին:

Նա առաջարկում եմ թույլ տալ Կրուպպի ֆիրմային  
թուրքերի հետ կնքել մատնանշված բովանդակությամբ  
պայմանագիր:

Պարոն ղեստան Ռիտտերի և պարոն  
պետական քարտուղարի միջոցով  
ղեկուցել արտաքին գործերի պարոն  
ռայխսմինիստրին:

Վիլ

ՊԱՊԵՆԸ—ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Պ ա ս ն ե լ լ

Անկարա, 13 մայիսի 1942 թ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

№ Ա 2632/42

Արտաքին գործերի մինիստրութեանը,  
Բեռլին

Բովանդակություն. Կովկասում թուրքական շահերի մասին:

Այսօր ինձ այցելեց դեներալ Մյուրսել Բաքու-փաշան և պատմեց, որ երկար զրույց է ունեցել մարշալ Չաքմարի հետ: Վերջինս հավաստիացրել է նրան, որ քաղաքացիական աշխարհում, որոնք այս հարցում հետաքրքրում են մեզ, անհապաղ թույլտվություն կստանան Գերմանիա մեկնելու: Ինչ վերաբերում է սպաներին, ապա նա պետք է առայժմ հրաժարվի թույլ տալուց: Թուրքական բանակում կան զգալի թվով կովկասյան և առանձնապես ադրբեջանական նախկին սպաներ, որոնք հրաշալի գիտեն երկիրը: Եթե գործողությունները հետադաժում հաջողությամբ դարգանան, նա, եթե մենք այդ ցանկանանք, սպաներին արձակուրդ կտա:

Այնուհետև նա ինձ պատմեց, թե գլխավոր շտաբում իմացել է, որ ուսաները նոր ավիացիոն գործարաններ են կառուցել, այն է՝ մի խումբը Զիտայում, մեկը—Տոմսկի ու Օմսկի մոտ և երրորդ խումբը Տաշկենտի մոտ: Ավարտված

է Ռաֆայի նավթահանքերի մշակումը, հույս ունեն, որ  
զրանց հանույթը կգերազանցի բաքվինից:

Դրանից հետո փաշան ինձ հանձնեց Ռասուլ-զադե  
էմինի տեղակալի և ադրբեջանական ազգային պարտիայի  
առաջնորդներից մեկի՝ Քերիմ Օղերի հուշատետրը: Հուշա-  
տետրը կցվում է թարգմանաբար<sup>1</sup>:

ՊԱՊԵՆ

---

<sup>1</sup> Գերմանական արտաքին գործերի մինիստրութեան գործերում  
որոնք զտնվում են Սովետական կառավարութեան տրամադջութեան  
տակ, այս փաստաթուղթը չի հայտարարված:



## ՀԱՐՈՒՆԻ ՀԵՏ ԽԵՆՏԻԳԻ ՈՒՆԵՑԱԾ ՋՐՈՒՑՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ

Գ ա դ ճ ի

### ԳՐԱՌՈՒՄ

Տեղեկացված լինելով հնդկական կոմիտեի անդամներից մեկի կողմից, — որին ես պատահամաբ հանդիպեցի, — այսօր ինձ այցելեց պրոֆ. դ-ր Հարունն այն նպատակով, որպեսզի դադտնաբար ինձ հաղորդի Թուրքիայում իր առած վերջին դիտմունքների մասին: Դ-ր Հարունն ասում է, որ ինքը մարշալ Չաքմաքի վստահված անձն է: Նա առնվազն հինգ անգամ զրուցել է նրա հետ Թուրքիան պատերազմի մեջ մտնելու հարցի շուրջը: Չաքմաքը Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը համարյա անխուսափելի է համարում: Այդ կարող է տեղի ունենալ և տեղի կունենա այն մոմենտին, երբ Թուրքական բանակը բավարար քանակությամբ սպառազինություն կունենա: Թուրքական հարձակումը կանցներ Իրանական սարահարթով Բաքվի ուղղությամբ: Խոսք անգամ չի կարող լինել բուն կովկասյան դիրքերի վրա հարձակվելու մասին: Կարծում են, որ անգլիացիներն Իրանում որևէ զգալի դիմադրություն չեն ցույց տա, բայց դրա փոխարեն հնարավոր են համարում հակահարված ստանալ ռուսական կողմից<sup>1</sup>...

Ինչ վերաբերում է «Թուրանական» հարցին, ապա նա իր անձնական փորձի և Թուրքական պառլամենտի դեպու-

1 Բայց է թողնված նամակի այն մասը, որը վերաբերում է սովետա-դեմոկրատական ռազմաճակատում տիրող իրադրությունը:

տատական շրջաններից բղխող տեղեկությունների հիման վրա, ինչպես նաև մարշալի կողմից, հավաստիացրեց, որ հակառակ պաշտոնական հայտարարություններին, ինչպես նաև Անկարայում մեր դեսպանի զեկուցագրերին, մեծ-թուրքական շարժումը ոչ միայն գոյություն ունի, այլև ամբողջ ժամանակ ամբապնդվում է ու ավելի և ավելի մեծ նշանակություն ձեռք բերում: Ի միջի այլոց իրերի իսկական դրություն վրա լույս է սփռում այն վաստը, որ պրեմյեր-մինիստրը կարգադրություն է արել կոնստիտուցիայից հանել բոլոր օտարազգի բառերը և ընդամին ոչ միայն Թուրքիայի հանդեպ, այլ զլիսավորապես մյուս թյուրքական ժողովուրդների հանդեպ տաժաժ ուշադրությունից դրդված: Իմ հարցին, թե հապա ինչպես է նա պատկերացնում դեպքերի հետագա զարգացումը, դ-ր Հարունը պատասխանեց, թե նկատի է առնվում ոչ թե այս երկրների նվաճումը Թուրքիայի կողմից, այլ դաշնակցային պետության ստեղծումը Բիսմարկի կայսրության նմանությամբ: Բացի Անատոլիայից նրա մեջ պետք է մտնեն Կովկասը և Վոլգայից արևելք ապրող թյուրքական ժողովուրդները:

Թուրքական պետական գործիչների իդեալն առաջվա նման այնպիսի դրությունն է, որի ժամանակ նրանք, սուր կերպով գիտակցելով սպառնացող զեղին վտանգը, կկարողանան միջնորդի դեր խաղալ Գերմանիայի ու Անգլիայի միջև: «Գերմանիան և Թուրքիան,— ասաց նա,— պետք է պատենեջ ստեղծեն զեղին վտանգի դեմ»: Ես ավելացրի. «Եվ Անգլիայի դեմ», որի հետ նա իսկույն սիրով համաձայնեց: Իմ այն հայտարարությանը, թե մի անգամ Թուրքերը Բալագիդի առաջնորդությամբ արդեն դիմադրել են մոնղոլներին, նա պատասխանեց, թե դա բոլորովին այլ բան է: Դրանով իսկ բնութագրվում է Թուրքիայի լիակատար անցումն ասիական տերության դիրքերից դեպի եվրոպական տերության դիրքը:

ԽԵՆՏԻԳ

ՊԱՊԵՆՐ — ՄԵՆԵՄԵՆՁԻՕՂԼՈՒՆ

Գ ա ղ ս ց ի

Անկարա, 12 հուլիսի 1942 թ.

Պարոն դեսպա՛ն:

Պատիվ ունեմ Զերդ գերազանցությանն ուղարկելու այսօր ստորագրված լրացուցիչ համաձայնության 4-րդ հոդվածով, զենքի խումբ VIII, նախատեսված բազմանյութերի հետևյալ ցուցակը.

Կրուպպի մարկայի 20 դաշտային զենիտային հրանոթ:  
Բոխումյան միավորման մարկայի 40 հրանոթի փող:

Շկոդի մարկայի 64 լեռնային հրանոթ:

Ընդունեցեք, պարոն դեսպան, կատարյալ հարգանացս հավաստիքը:

ՊԱՊԵՆ

Պարոն դեսպան Նուման Մենեմենջիօղլուն:

Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության գլխավոր բարատուգարին:

Անկարա



ԳԻՏՏՄԱՆԸ — ՏՐՊՊԵԼԱԿԻՐԽԻՆ

ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈԼԵԳԻԱ

ԼԵԻԱՅԻՈՆ ԵՈՐԸՐԴԱԳԱՆ

ԳԻՏՏՄԱՆ

Ստորև ես շարադրում եմ իմ տեսակետն այն հարցերի նկատմամբ, որոնք պարունակում են Պապենի կողմից գրված են հուլիսի 24-ի նրա հաշվետվության մեջ—Ա 3835/42.

1. Օկուպացված արևելյան մարզերի գործերի մինիստրությունում տեղի ունեցած բազմաթիվ խորհրդակցությունների հիման վրա իմ մեջ այն տպավորությունն է ըստեղծվել, որ կայսերական մինիստր Ռոզենբերգը հավանություն չի տալիս Գերմանիայի պրոտեկտորատի տակ ինքնուրույն կովկասյան պետություններ ստեղծելու պլանին: Ճիշտ է, օկուպացված արևելյան մարզերի գործերի մինիստրությունում էլ այն կարծիքն է ամրանում, թե Կովկասում գրությունն էապես այլ է, քան Սովետական Միության արդեն օկուպացված ուրիշ մարզերում, և այդ պատճառով Կովկասում, գոնե արտաքուստ, անհրաժեշտ է կառավարման մի ուրիշ ձև ընտրել, քան, օրինակ, Ուկրաինայում: Սակայն, ինչպես ինձ հաղորդեցին խիստ զաղտնաբար, մինիստր Ռոզենբերգը վերջին օրերս անձամբ մի մանրամասն զեկուցագիր է մշակել կովկասյան մարզերի ապագա քաղաքական կազմակերպման մասին, այն ֆյուրերին ներկայացնելու համար: Այս զեկուցագրի մանրամասնությունները մինչև այժմ հայտնի չեն տվյալ մինիստրության նույնիսկ այդ հարցով զբաղվող ռեֆերենտներին, իսկ հիմնականում զեկուցագիրը կողմ է Կովկասում գերմանական քաղաքացիական ադմինիստրացիա ըստեղծելու սկզբունքին: Սակայն ամբողջ Կովկասի գերմա-

նական բաղադրացիական իշխանություն գերագույն ներկայացուցիչը պետք է կոչվի ոչ թե «ռալսակոմիսար», ինչպես այդ ենթադրվում էր սկզբում, այլ «փոխարքա», իսկ նրա ներկայացուցիչներն առանձին մարզերում (Վրաստան, Սղրբեջան, Հայաստան, Հյուսիսային Կովկաս) կկոչվին «գլխավոր լիազորներ»:

2. Ինչ վերաբերում է Ղրիմի թաթարներին, ապա, որքան ինձ հայտնի է, արդեն վճռված է նրանց ինքնավարության իրավունք շտալ: Մոտավորապես երեք շաբաթ սրանից առաջ նույնիսկ այն կարծիքը գոյություն ունեւ, թե թաթարներին պետք է վտարել Ղրիմից և այն դարձնել զուտ գերմանական մարզ: Այս պլանից հրաժարվեցին ամենից առաջ նրա կիրառման հետ կապված տեխնիկական դժվարությունների պատճառով: Սակայն Ղրիմը Պերեկոպից հյուսիս գտնվող և նրան միացված ուղիղաձիգի մի քանի մարզերով կկառավարվի գլխավոր կոմիսարիատի կողմից, որի գլուխ է կանգնելու հասուկյտեր Ֆրատեն-ֆելդը:

3. Բեռլինում գտնվող կովկասյան էմիգրացիայի ղեկավար ներկայացուցիչների դժգոհությունը, որի վրա իր հաշվետվության մեջ ակնարկում է դեսպան Պապենը, վերջին օրերը զգալիորեն աճել է: Նրանց անհանգստությունը բացատրվում է նրանով, որ կալսերական մինիստր Ռոզենբերգը մերժել է դեսպան կոմս Ֆոն Շոլենբուրգի կողմից հասուկյտեր Մեյերին հանձնված խնդիրքը, որպեսզի կովկասյան էմիգրանտները, որոնք ներգրավված են արտաքին գործերի մինիստրության կողմից, օգտագործվեն ին համապատասխան իրենց դրաված դիրքին: Հակառակ իր ռեֆերենտների կարծիքներին, մինիստր Ռոզենբերգը որոշում ընդունեց, որ միմիայն առանձին էմիգրանտներ կարող են ընդունվել օկուպացված արևելյան մարզերի գործերի մինիստրությանը կից արդեն գոյություն ունեցող կոնսուլտանտների կադրերի մեջ: Էմիգրանտները մերժեցին այդ առաջարկը, որովհետև նրանք չէին ուզենա օկու-

պացված մարզերի գործերի մինիստրութեան աշխատակից-  
ներ լինել, որը գործնականորեն կըղխեր վերը մատնա-  
նշված առաջարկն ընդունելուց: Էմիգրացիայի, առանձ-  
նապես փորձեղանական, ներկայացուցիչների հետ ունե-  
ցած զանազան խորհրդակցութիւնների ընթացքում ես  
նկատեցի, որ նրանք շատ ձնշված են և միայն դժվարու-  
թյամբ կարողացա համոզել նրանց, որ նրանց խնդիրը  
Գերմանիայում չպետք է համարել շահողված: Միայն  
մեծ դժվարութեամբ հաջողվեց նրանց հետ կանգնեցնել  
անհապաղ Թուրքիա վերադառնալու դիտաւորութիւնից,  
որովհետեւ նրանք այլևս հնարավորութիւն չեն տեսնում  
գործունեութեան հարմար ասպարեզ գտնել Գերմանիայում:  
Կարիք չկա ասելու, որ Էմիգրանտների վերադարձը ներ-  
կայումս կհասցնէր հետագա անհանգստութեանը թուրքա-  
կան շրջաններում:

Իմ կարծիքով, դեսպան Ֆոն Պասպենի հաշվետւութիւնը  
պետք է առիթ ծառայէր, որպեսզի արտաքին գործերի մի-  
նիստրութիւնը գրավոր ղեմում ուղղէր օկուպացված արե-  
վելյան մարզերի գործերի մինիստրութեանը (Թերեա, պ.  
պետական քարտուղարի՝ հատուկատեր Մեյերին ուղղած  
նամակի ձևով), որի մեջ, վկայակոչելով դեսպան կոմս Ֆոն  
Շուլենբուրգի խոսակցութիւնը հատուկատեր Մեյերի հետ,  
կրկին անդամ մատնանշվել, թէ Էմիգրանտական պրոբլեմի  
բավարար լուծումը չափազանց անհրաժեշտ է հօգուտ գեր-  
մանա-թուրքական փոխհարաբերութիւնների: Գաղտնաբար  
կարող էմ հաղորդել, որ օկուպացված արեւելյան մարզե-  
րի գործերի մինիստրութիւնում Կովկասի հարցերի ու-  
ֆերենտ պրոֆեսոր Ֆոն Մենդեն երկու օր սրանից առաջ  
համառօրեն խնդրում էր ինձ արտաքին գործերի մինիստրու-  
թեան աշխատի նամակի մասին, որովհետեւ նա հույս ու-  
նի, թէ դրա օգնութեամբ իրեն կհաջողվի ազդել մինիստրի  
վրա այն հաշվով, որպեսզի նա իր որոշումը փոխի:

ԴԻՏՏՄԱՆ

Ներկայացված է պ. դեսպանորդ Ֆոն Տիպպելեկերին  
բանավոր վրույթի վկայակոչումով:

Բեռլին, 5 օգոստոսի 1942 թ.



ՀԵՌԱԳԻՐ

Անկարա, 26 օգոստոսի 1942 թ.

Ստացված է 27 օգոստոսի 1942 թ. 3 ժ. 07 ր.

№ 74, 26 օգոստոսի

Այսօր ես ունեցա առաջին պաշտոնական զրույցը նումանի հետ նրա նոր պաշտոնին՝ անցնելուց հետո:

Նումանը շնորհակալություն հայտնեց այն սրտագին ընդունելության համար, որ ցույց էին տվել ֆյուրերն ու արտաքին գործերի դաշխամինիստրը Արիկանին: Արտաքին գործերի մինիստրի հետ տեղի ունեցած զրույցի էությունը վերաբերմամբ նա նկատեց հետեւյալը. նա ի դիտություն ընդունեց արտաքին գործերի դաշխամինիստրի անունից իրեն կրկին անգամ հաղորդված հայտարարությունն այն մասին, թե նույնիսկ Ռուսաստանի պարտությունից հետո չէր կարող խոսք անգամ լինել Անգլիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու մասին: Ինչ վերաբերում է արտաքին գործերի դաշխամինիստրի գիտողությանը, թե, ըստերեւութին, Թուրքիան դեռ մինչև այժմ հավատացած չէ, թե ով հաղթող դուրս կգա այս պատերազմից, ապա նա, Նումանը, ուզում է ինձ պարզաբանել Թուրքական գլխավոր շտաբի տեսակետը, որը, բնականորեն, նա ինքն էլ ընդունում է:

Թուրքական գլխավոր շտաբը գտնում է, որ Ստալինգրադի գրավումն այս տարվա պատերազմական գոր-

1 Մենեմենշինովուն նշանակվել էր արտաքին գործերի մինիստր:

ծողութիւնները վճռողական մոմէնտը կհանդիսանա: Նրա կաթօրէքով, ռուսական պրոբլէմի լուծումն այն է, որ Ստալինգրադից առաջ շարժվեն գեպի հյուսիս և կտրեն Կույբիշև—Մոսկվա երկաթուղին: Այս պայքում ռուսական զորքերի կենտրոնական և հյուսիսային խմբերն, իրենց տրամադրութեան տակ ընդամենը միայն մի երկաթուղի կունենան, մի թան, որը պետք է հասցնի այս զորքերի ջախջախմանը: Այն, որ ռուսները սրանից երեք շաբաթ առաջ հակառակորդի ուշադրութիւնը շեղելու նպատակով իրենց ստրատեգիական ռեզերվները անհեռանկար գրոհի նետեցին գերմանական զինված ուժերի դեմ կենտրոնական և հյուսիսային հատվածներում, խոշորագույն ստրատեգիական սխալ է:

Կույբիշևի վրա հարձակվելու միջոցով կենտրոնական և հյուսիսային հատվածներում ռուսական զինված ուժերի վերջնական ոչնչացման հետ համեմատած գործողութիւնները Կովկասում միայն երկրորդական նշանակութիւն ունեն: Նշնելով այս իրադրութիւնից, գլխավոր շտաբը համոզված է, որ տարվա վերջին Գերմանիան այնքան կթուլացնի ռուսներին, որ նրանք կդադարեն վճռողական գործունէ լինելուց այս պատերազմում:

Դրան կապելանա հարավից կատարվող անգլո-ամերիկյան մատակարարումների բլոկադան:

Նումանը սրանից հետևյալ եզրակացութիւնն է անում. արտաքին գործերի ռախսամինիստրի վերը հիշատակված հարցն այս բալորի պատճառով չհիմնավորված է հանդիսանում: Նշնելով ընդհանուր իրադրութիւնից և այն դրույթից, որ Թուրքիան, ինչպէս առաջ, այնպէս էլ այժմ, ամենամեծական կերպով շահագրգռված է բոլշեւիկյան Ռուսաստանի բոտ կարելուն ավելի լիակատար պարտութեամբ, Թուրքիան երբեք ոչ մի բանակցութիւն չի վարել ռուսական կառավարութեան հետ, բացառութեամբ անգլիացիների ազդեցութեան տակ արված այն հայտարարութեան, թե բարեկամութեան մոտին մինչ այդ կնքված պայմանու-

գիրն ուժի մեջ է մտնում: Նա ինձ ամենակտրական կերպով հայտարարում է, որ թուրքական նոր ղեսպանը Մոսկվայում հրահանգներ է ստացել ոչ մի բանակցության մեջ չմտնել: Նա պետք է ամենակտրական կերպով հերքի գերմանական կողմից արտահայտված այն կասկածը, թե ռուսները թուրքական սահմանից մի քանի զիվիզիա են հետ քաշել՝ իբր թե թուրքիայի կողմից արված հավաստիացումների հիման վրա:

Ես շնորհակալություն հայտնեցի Նումանին նրա արած հայտարարությունների համար, բայց նրանից չըթաքցրի, որ մեզանում վերջին ժամանակներն այն տպավորությունն է ստեղծվել, թե թուրքիան շատ սիրով է լսում անգլիացիների ու ամերիկացիների շնչյուններին, որոնք պնդում են, թե այդչափ թուլացած Ռուսաստանն այլևս երբեք սպառնալիք չի ներկայացնի թուրքիայի համար, այնինչ Գերմանիան, տիրելով Սև ծովին, ապագայում թուրքական շահերի համար սպառնալիք կներկայացնի, որի նշանակությունը չպետք է թերագնահատել:

Նումանը դրա դեմ առարկում էր առանձնակի դուրսբորբոքությամբ: Եթե դաշնակիցները նրա առջև երբևիցե և դրել են այս հարցը, ապա նա միշտ պատասխանել է, որ վիթխարի սլավոնական կայսրությունը երբեք չի դադարի սպառնալիք լինել թուրքիայի համար և որ, ընդհակառակը, թուրքերը ոչ մի կերպ իրենց համար սպառնալիք չեն տեսնում գերմանական հարևանության մեջ: Որովհետև, ավելացրեց նա, ինքը ոչ մի դեսլբում չի կարող պատկերացնել, թե ռուսական պրոբլեմի վերջնական ու երկարատև ժամանակի համար հաշվի առնված լուծումը ֆյուրերը կարող է որոնել սահմանային պատենշ դնելու մեջ, որը հարկավոր կլիներ շարունակ պաշտպանել, և մի շարք պետություններ ստեղծելու մեջ, որոնք գտնվեին Գերմանիայի ստտիկանական ղեկավարության տակ: Գերմանիայի առաջ կանգնած՝ ռուսական պրոբլեմի լուծման խնդիրը անհավատալիորեն դժվար է: Թուրքիան ու-



լոր տեսակետներից շահագրգռված է, որպեսզի... (երեք խումբ աղավաղված են), և այդ պատճառով պատրաստ է հնարավորի սահմաններում օգնություն ցույց տալ կայսրությանը: Քանի որ նրա երկիրն իմպերիալիստական քաղաքականություն չի վարում, նրա շահերը միայն այն են, որ նրա քաղաքական փոքրամասնությունների կուլտուրական գոյությունն ամուր ապահովված լինի: Բացի այդ, Թուրքիայում համոզված են, որ ռուսական պրոբլեմը կարող է հաջողությամբ լուծվել միայն այն դեպքում, եթե այդ բոլոր տարբեր ժողովուրդներն իրենց կուլտուրական առանձնահատկություններով ոտքի կանգնեն Գերմանիայի կառավարման ներքո: Միայն այս ճանապարհով կարելի է նրանց ներգրավել ակտիվորեն աջակցելու պանսլավիզմի վտանգի դեմ ընդհանուր պայքարին:

Իմ հարցին, թե ինչում կարող է կայանալ Թուրքիայի աջակցությունը, Նումանը պատասխանց, թե այդ աջակցությունը որոշ չափով սահմանափակվում է չեզոքություն պահպանելու անհրաժեշտությամբ, բայց որ այդ աջակցությունը մեզ ցույց կտրվի այնտեղ, որտեղ նրա երկիրը պետք է ներկայացնի օրինական կուլտուրական շահեր: Նա ինձ խնդրեց դիմել իրեն այն բոլոր հարցերի առթիվ, որոնց նկատմամբ մենք կցանկանանք ստանալ Թուրքիայի խորհուրդը վարչական և պերսոնալ հարցերի վերաբերմամբ:

Գրավոր հաղորդման մեջ, ուղարկում ենք սուրհանդակով օգոստոսի 29-ին, ես արեւելյան մարզերի գործերի մինիստրության ներկայացուցիչների ուղեկորության կապակցությամբ նորից կվերադառնամ տվյալ հարցի մանրամասնություններին:

Նավատորմի հարցի վերաբերյալ... (մի խումբ աղավաղված է) նա հայտարարեց.

Այստեղ կարող է լինել միայն մեկ անփոփոխ որոշում—լիակատար ներկալումը, ըստորում մի այնպիսի տեղում, որը համապատասխանում է Թուրքիայի շահերին

(համենայն դեպս ոչ միջերկրածովյան նավահանգիստներում): Խոսք անգամ չի կարող լինել որևէ բանակցության մասին: Ոչ մի փոփոխություն չի թույլատրվի:

Այն հարցին, թե ինքն ինչ կարծիք ունի Մոսկվայի կոնֆերենցիայի արդյունքների մասին, նա պատասխանեց. կուլբիշևյան դիվանագետների շրջաններից լսում ես հենց միայն շաղակրատանք: Սակայն ամենամոտիկ օրերս նա խոնդոնի իր դեսպանից սպասում է մանրամասն հաղորդագրության, որից հետո ինձ իրազեկ կդարձնի: Ըստ երեվույթին, որոշում է ընդունվել Կովկասում երկրորդ ճակատ բանալու մասին: Մինչև այժմ ռուսները կտրականապես մերժում էին իրենց տերիտորիայում օտարերկրյա զորքերի օգտագործման մասին արվող բոլոր առաջարկները: Նույնիսկ վերջին օրերի ընթացքում լեհական նոր դիվիզիաներն ուղարկվել են Իրան: Հետ են ուղարկված հայրենիք նույնիսկ երկու անգլիական օդաչուները, որոնց ներկայությունը ռուսական ճակատում միայն համագործակցության սիմվոլ էր: Սակայն ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ այժմ Ռուսաստանը մտադիր է շեղվել այդ սկզբունքից Հարավային Կովկասի վերաբերմամբ: Այդ ենցույց տալիս Վորոշիլովի և Վիլսոնի նշանակումները, Բասրայի մատուլյոններում իբր թե դտնվում են ամերիկական երկու դիվիզիա:

Այս հաղորդագրության կապակցությամբ Նոմանն ավելացրեց. դաշնակիցների ամեն մի առաջարկ՝ դրդելու Թուրքիային որևէ ձևով... (բնագիրը պարզ չէ) իր վրա չլերցնել այդ տեսակ երկրորդ ճակատի բացումը, անխուսափելիորեն կնշանակեր պատերազմ: Այդպիսի դիրքը համապատասխանում է ամենից առաջ Թուրքիայի շահերին, բայց նա կարծում է, որ այն օգտակար կլինի նաև Գերմանիայի համար:

Ուիլկիի ուղևորությունը Թուրքիա և այդ մասին ծանուցումը մամուլում, առանց Թուրքիային ուղղված որևէ

նախնական հարցման, նա համարում է սովորական ամերիկական անպատկառութեան արտահայտում:

Վերջում մինիստրն ինձ հուշագիր հանձնեց սպառազինության համար տրվելիք վարկերի հարցերի վերաբերյալ գերման-թուրքական բանակցությունների ընթացքի մասին: Նա ափսոսանք հայտնեց, որ ներկայումս բանակցություններն էքսպերտների ձեռքին անվերջ ձգձգվում են: Նա ինքրկարժու էր, և այդ ընդգծվեց դեկեմբրիային ցույց տրված սրտագին ընդունելությամբ, որ այդպիսի համաձայնության կնքումը թելադրվում է քաղաքական անհրաժեշտությամբ: Նա ափսոսում է, որ, ահնեբերեն, Թուրքիայի դիրքի վերաբերմամբ Բեռլինում ստեղծված անճիշտ պատկերացման հետևանքով տվյալ մոմենտին բանակցություններն ըստերևույթին կանգ են առել մեռյալ կետի վրա: Ես պատասխանեցի, որ իրազեկ չեմ բանակցությունների ընթացքին: Այդ մասին հեռագիրը հարկավոր է:

9 Ա. Գ. Ե. Ն.



ՊԱՊԵՆԸ — ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ<sup>1</sup>

Գ ա ղ ա ճ ի

Անկարա, 27 օգոստոսի 1912 թ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

№ Ա 524/42 գաղտնի

Արտաքին գործերի մինիստրությանը,  
Բեռլին

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն. Թուրքական նոր պրեմյեր-մինիստրի կարծիքները թյուրքական փոքրամասնությունների և Ռուսաստանի ապագայի հարցի վերաբերմամբ:

Ես այսօր առաջին այցը տվի նոր նշանակված պրեմյեր-մինիստր պ-րն Սարաջօղլուին:

Զրույցի ընթացքում, որը շուտփուլ էր Թուրքիայի ընդհանուր դրությունը, ես հարցրի նրան, ինչպես երեկ նումանին, ռուսական հարցի վերաբերմամբ նրա տեսակետի մասին:

Պրեմյեր-մինիստրը պատասխանեց, որ ինքն ուզում է այդ առթիվ ինձ պատասխան տալ թե՛ իբրև թուրք և թե՛ իբրև պրեմյեր-մինիստր:

Իբրև թուրք նա բռնուն կերպով ցանկանում է Ռուսաստանի ոչնչացումը: Ռուսաստանի ոչնչացումը հանդիսանում է ֆյուրերի սիրագործությունը, որին հավասարը

<sup>1</sup> Փաստաթղթի վրա կա վերմանի վիզան:

հարյուրամյակում մեկ անգամ կարող է կատարվել. այդ նաև թուրքական ժողովրդի վաղեմի իղձն է: Յուրաքանչյուր թուրք, նույնիսկ անգլիացիների համար գրող Յալչինը, չի կարող այդ մասին մտածել այլ կերպ, քան ինքը: Նորերս ունեցած իր ելույթում, որով նա արտահայտեց իր նվիրվածությունը թուրքիզմի գաղափարին, նա ուզում էր կողմնակի կերպով մատնանշել այդ բանը:

Ռուսական պրոբլեմը կարող է լուծվել Գերմանիայի կողմից, եթե միայն սպանվի Ռուսաստանում ապրող բուլոր ռուսների առնվազն կեսը, եթե այսուհետև ռուսական ազգեցություն տակից մի անգամ ընդմիշտ հանվեն ռուսացված մարդերը, որտեղ բնակվում են ազգային փոքրամասնությունները, և եթե այս մարդերը դրվեն սեփական ոտքերի վրա, ներգրավվեն կամավոր համագործակցության մեջ առանցքի տերությունների հետ և դաստիարակվեն որպես սլավոնության թշնամիներ: Ինչ վերաբերում է ռուսական մարդկային պոտենցիալի զգալի մասի ոչնչացմանը, կան մարդկային պոտենցիալի զգալի մասի ոչնչացմանը, ապա դաշնակիցներն ամենաճշմարիտ ճանապարհով են ընթանում: Թե ինչ է որոշել ֆյուրերն ազգային փոքրամասնություններով բնակեցված մարդերի ապագա կառուցվածքի մասին, իրեն հայտնի չէ: Այդ մարդերի բնակչության գերակշռող մեծամասնությունը բաղկացած է թյուրքական ժողովուրդներից, և այդ պատճառով Թուրքիան օրինական շահ ունի այդ հարցի լուծման մեջ: Նա հիշեցրեց միայն մասին, որ ես իր ժամանակին ֆյուրերի հանձնարարությամբ հայտարարել էի պրեզիդենտին, թե Թուրքիան Նոր Եվրոպայում պետք է հարավ-արևելյան ուժեղ ֆորպոստ կազմի, որի հետևանքով պետք է ուշադրության առնվի նաև թյուրքական ժողովրդական մոմենտը ներկայումս ռուսացված երկրներում: Հասկանալի է, այնտեղի ինտելիգենցիան—որչափով այն առհասարակ կա—կամ անձնատուր է եղել բոլշևիզմին կամ ոչնչացվել է նրա կողմից: Ուստի և հարկավոր կլինի այդ երկրների երիտասարդ սերնդի որոշ մասն ուղարկել գերմանական, և նրա

որոշ մասը՝ թուրքական համալսարաններ. այն ժամանակ  
այս նոր երիտասարդ սերունդը կկարողանա երաշխավորել  
ապագայում երկու գործոնների լիարժեք համագործակցու-  
թյունը:

Գերմանիան մի շարք էմիգրանտների, որոնք ծագում  
են այդ երկրներից, կանչեց կայսրություն, որպեսզի լսի  
նրանց կարծիքը կամ օգտի նրանց ծառայություններից:  
Նրանց մի մասն այնտեղից վերադարձավ այն կարծիքով,  
որ Գերմանիան մտադիր չէ թյուրքական փոքրամասնու-  
թյուններ ունեցող երկրներին ինքնուրույնություն տալու,  
այլ ուզում է նրանցից այնպիսի պետություններ ստեղծել,  
որոնք գտնվեին գերմանական վարչական և ոստիկանական  
դեկավարության ներքո: Սարաջօղլուն չի հավատում, որ  
ֆյուրերն այս կարծիքին է: Եթե մոտ ժամանակներս ուս-  
ները լիովին ջախջախվեն, մենք կիմանանք, որ այդ պե-  
տությունները՝ իրենց ոչ-ուս փոքրամասնություններով՝  
մեզնից սպասում են ազատություն և վերականգնում:  
Մենք չպետք է նրանց հիասթափեցնենք այդ հույսի մեջ:  
Փոքրամասնությունները նույնպես մեզ չեն հիասթափեցնի:

Այսպես էր խոսում նա որպես թուրք:

Որպես պրեմյեր-մինիստր նա պետք է հոգ տանի, որ-  
պեսզի ներկա մոմենտում ամենաշնչին չափով անգամ չը-  
պատահի ոչ մի այնպիսի բան, որը կարողանար ամե-  
նաշնչին առիթ տալ ուսաներին թյուրքական փոքրամասնու-  
թյունները ոչնչացնելու միտքների երկյուղն ուրիշ ազդու-  
թյունների առաջ, հայտնի է: Այդ պատճառով նրանք չեն  
ցանկանում տեսնել իրենց հողի վրա պատերազմելիս ո՛չ  
լեհերին, ո՛չ անգլիացիներին, ո՛չ ամերիկացիներին: Ադր-  
բեջանական թյուրքերը, որոնք Իրանում իրենց համակրու-  
թյունն արտահայտեցին Թուրքիային, նորերս լիովին  
բնաջնջվեցին՝ իրենց պատկանող գյուղերի հետ միասին<sup>1</sup>:

<sup>1</sup> Սարաջօղլուն այս հայտարարությունը սկզբից մինչև վերջը  
սուտ է: Նման ոչ մի բան Ադրբեջանում տեղի չի ունեցել: Թուրքիայի



Այստեղից բխում է խիստ շեղոք դիրքի անհրաժեշտությունը: Որպես պրեմյեր-մինիստր նա անհրաժեշտ է համարում խիստ շեղոքություն պահպանել նաև նրա համար, որպեսզի չվարկաբեկվի Թուրքիայի դիրքը, որովհետև, նրա կարծիքով, Ռուսաստանի մոտեցող ջախջախումը, անկասկած, անգլիացիների մեջ ցանկություն առաջ կբերի հաշտություն կնքելու: Եվրոպային նորից խաղաղություն տալու այս հնարավորությունը չպետք է բաց թողնվի:

Նա շնորհակալություն հայտնեցի պրեմյեր-մինիստրին նրա պարզաբանության համար և հարցրի նրան, թե մենք գործնականորեն ինչպես կկարողանայինք ապահովել Թուրքիայի որոշ համագործակցությամբ կամ հաշվի առնել խուրբական շահերը նվաճված մարզերը կառավարելու ժամանակ և դրանք վերականգնելիս: Ինչպես որ երեկ Նումանը, այնպես էլ Սարաջոդուն ինձ ասաց, որ կարիք եղած դեպքում նա սիրով պատրաստ է գործնական հարցերի շուրջն ինձ հետ հավատարմական բանակցություններ վարել կամ թե այդպիսի հարցերի քննարկման համար հիշատակել մեզ մի երրորդ անձնավորություն:

Այսօր պրեմյեր-մինիստրը տեսչական ուղևորության է գնում դեպի ռուսական սահմանը, որովհետև, ինչպես նա ինձ ասաց, իրեն ծանոթ չեն այդ մարզերը և ինքն ուզում է անձնական տպավորություն ստանալ դրանց մասին: Այնտեղից նա կվերադառնա Անկարա՝ Սամսունի վրայով:

Ունեցածս զրույցից իմ մեջ այն տպավորությունը ստեղծվեց, որ պրեմյեր-մինիստրը ամենակենդանի հետաքրքրությամբ է հետևում դեպքերի զարգացմանը Ռուսաստանում ու առանձնապես Կովկասում և որ նա ուզում է այս հարցի շուրջը սերտ կոնտակտի մեջ մնալ ինձ հետ:

Վերը շարադրված հարցերը քննարկվել են նաև օկուպացված արևելյան մարզերի գործերի մինիստրության

---

հանդես ադրեկանական թուրքերի տածած «համակրությունների» մասին տես վերը, № 10 փաստաթուղթը, էջ 31—32

Հանձնարար

Երևան, 1947 թ.

## ՄԱՍԻՆԻՍ

Գրականություն

Լեռն: Սօվետական կուլտուրա  
միության հրատարակչություն  
և Երևանի համալսարանի  
Գրականության  
Գրականության

Երևանի համալսարանի Գրականության  
հրատարակչություն, Երևան, 1947 թ.

Երևանի համալսարանի Գրականության  
հրատարակչություն, Երևան, 1947 թ.

Երևանի համալսարանի Գրականության  
հրատարակչություն, Երևան, 1947 թ.

Երևանի համալսարանի Գրականության  
հրատարակչություն, Երևան, 1947 թ.

ներկայացուցիչ՝ պրոֆեսոր Ֆոն Մենդել հետ։ Քննարկմանը ներկա էր ՍՍ բրիգադեն—Ֆյուրեր Յիմմերմանը, որը կոնտակտ է հաստատել էմիգրանտների մի ուրիշ շրջանի հետ։ Մեր միջև տեղի ունեցած զրույցներից ես կարողացա անել այսպիսի հետևություն։

Թուրքերի կարծիքն այն է—և ես լիովին միանում եմ զրան,—որ ռուսական պրոբլեմի լուծումը երկարատև ժամանակի համար հնարավոր կլինի, եթե միայն տարբեր մարզերում եղած փոքրամասնությունները դաստիարակվեն ակտիվ համագործակցության ոգով և եթե նրանց պատվաստվի ինքնուրույնության զգացմունք, հասկանալի է, Գերմանիայի կողմից ցույց տրվելիք հոգևոր, տնտեսական և ուղղմական ղեկավարության շրջանակներում։ Հետևելով լավ օրինակներին (օրինակ Ճապոնիային՝ Բիրմայում), մենք պետք է փորձենք կովկասյան և անդրկասպյան երկրներում գտնել տեղական ծագում ունեցող մեկական հարմար անձնավորություն՝ որը կառավարման գլուխ կանգնելով, ձևականորեն կներկայացնի վարչական իշխանությունը։ Այս անձնավորության կողքին պետք է կանգնած լինի գերմանական մի պատասխանատու ղեկավար—ձևականորեն հետին պլանում որպես խորհրդական, որն ըստ էության պետք է հանդիսանա ղեկավարող, ուղղություն տվող, պատասխանատու մի անձնավորություն. այս անձնավորություններին կնխակա պետք է լինեն անհրաժեշտ բանակցությամբ վարչական հիմնարկներ, որոնցում մեծ մասնակցություն ունենան տեղական տարրերը։ Ազդելիք փոքրամասնություններից արդեն այժմ կազմված լեզվի տեղի տեղական ծագում ունեցող անձնավորությամբ։

Յուրաքանչյուր շրջանի համար տեղական ծագում ունեցող համապատասխան ղեկավար անձնավորություն ընտ-



րելիս ես կկարողանայի, ինչպէս բխում է նումանի և Սարաջօղլուի հետ ունեցած իմ զրույցներից, ցանկացած ժամանակ հարցնել թուրքական ղեկավար շրջանների կարծիքը և այդպիսով ընդհանուր շահագրգռվածութիւնն ստեղծել քաղաքական նոր դոյացումների նկատմամբ:

Այս առաջարկը, իհարկէ, լիովին տարբերվում է Ուկրաինայում և Ռուսաստանի մշուս օկուպացված մարզերում մտցված զուտ գերմանական կառավարչութիւնից ու ադմինիստրացիայից: Բայց ես անդրկոմկասչան և անդրկասպյան պետութիւնների վերաբերմամբ իմ առաջարկի օգտին առաջադրում եմ այն փաստարկը, որ այստեղ խոսքն առաջնակարգ կարևորութիւնն ունեցող արտաքին քաղաքականութեան հարցի մասին է: Առանց Թուրքիայի շահագրգռվածութեան և առանց այն գործոններն օգտագործելու, որոնք պարունակվում են ընդհանուր մուսուլմանական կրօնի մէջ, այս երկրների օկուպացիան և կառավարումը կարող են մեր կողմից իրականացվել միայն զուտ գերմանական ուստիականական կառավարման հիման վրա: Թուրքիան անխուսափելիորեն կմնար այս նոր Նվրուպայի ստրուկտուրայից դուրս: Այսպիսի սխալ կազմվածքի հետեւանքները շատ շուտով իրենց զգալ կտային:

Քանի որ Կոմկասից իջնող հաղթական գերմանական զորքերի հետ միասին այս երկրներում պետք է ստեղծվեն նոր կառավարման առաջին տարրերը, միանգամայն անհետաձգելի է, որ ֆյուրերն այս հարցը վճռի ժամանակին իր նախադժած համաքաղաքական մեծ կոնցեպցիայի ոգով:

ՊԱՊԵՆ

ՊԱՊԵՆԸ — ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ

Գ ա ղ Յ Ե Ի

ՀԵՌԱԳԻՐ

Տեղագիտ., 28 օգոստոսի 1912 թ.

Ստացված է 28 օգոստոսի 1912 թ. 14 ժ. 37 ր.

№ 1205

Պրեմյեր-մինիստրի հետ ունեցած իմ երեկվա հանգամանային զրույցի մասին կողարկվի մանրամասն հաշվետվություն գրավոր ձևով: Համառոտակի ես կարող եմ հավաստել, որ նա Մոսկվայի բանակցությունների հիման վրա նույնպես հավատում է, թե դաշնակիցներն Արևելքում պատերազմի վարումն ամենաուժեղ կերպով կակտիվացնեն, որի հետևանքով Թուրքիան նորից կգտնվեր դեպքերի կենտրոնում: Որպեսզի հնարավոր լիներ Թուրքիայի կողմից իր շեղոք դիրքը լիովին պահպանելու պարագայում մեզ հետ պահպանել,— որքանով որ այդ մեզ համար ցանկալի է,— կարծիքների կատարելապես գաղտնի փոխանակություն երկու կողմերին հետաքրքրող՝ հարևան մարզերի հարցերի շուրջը, նա առաջարկեց հիշատակել մի երրորդ անձնավորություն, որի միջոցով կարելի կլիներ նման բանակցություններ վարել: Ես նաև խոստում ստացա, որ Թուրքիան մատների արանքով կնայի թուրքական տերիտորիայով որոշ անձնավորությունների ուղևորության վրա: Իմ կարծիքով, Սարաջոզլուի առաջարկը նշանակում է մի ուրախալի քայլ դեպի առաջ և կողիւր է հանդիսանում Թուրքիայի համար մղվող պայքարում, որը զարգանում է կրկին: (Այժմ նա, զինվորականների ուղեկցությամբ, տեսչական ուղևորության է մեկնում դեպի արևելյան սահմանը):

ՊԱՊԵՆ

**ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ — ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆԸ<sup>1</sup>**

Գ ա ղ ա ճ ի

10 սեպտեմբերի 1942 թ.

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ  
ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

№ 1372/42 զաղտ. գործ

VIII ա. Ի. Մ. հրամանատարության

Էովանդակություն, Շվեյցարական դեսպանորդի  
գրույցը՝ Թուրքիայի արտաքին գործերի մինիստրի  
հետ:

1942 թ. օգոստոսի 25-ին շվեյցարական միսիան Ան-  
կարայում ուղարկեց Բեռն, Կանտոնալ-քաղաքական դե-  
պարտամենտին սրան կցված հաղորդագրությունը (Թարգ-  
մանություն ֆրանսերենից):

Հատկապես մատնանշվում է, որ այս հաղորդագրու-  
թյան նկատի առնված օգտագործման դեպքում այն աղ-  
բյուրր, որից այն ստացվել է, չպետք է հիշատակվի և  
չպետք է հայտաբերվի փաստաթղթի բովանդակությունից:  
Հավելված՝ 5 թերթի վրա Հանձնարարությամբ՝

(ստորագրությունն անընթեռնելի է)

<sup>1</sup> Բնագրի վրա կա Վեյցդեկե-ի և Վերմանի վերան,



Շվեյցարիայից վերադառնալուց և Ստամբուլում երկու օր մնալուց հետո ես հերթական այց տվի պ-րն Նուման Մենեմենջիօղլուին, որն արտաքին գործերի մինիստրի պաշտոն է ստացել: Ստամբուլում եղած ժամանակ ես հանդիպում էի Գերմանիայի և Իտալիայի դեսպանների հետ, բայց չկարողացա ընդունվել ամերիկական դեսպանի կողմից, որը հիվանդ էր և գտնվում էր գոսպիտալում:

Պ-րն Մենեմենջիօղլուի համար, իհարկե, շատ հաճելի էր ստանալ այն ուղերձը, որը ես Ձեր անունից հանձնեցի նրան, և նա ինձ խնդրեց հավաստիացնել Ձեզ իր բարեկամության մասին: Նա իսկույն ևեթ հավաստիացրեց ինձ թե Սարաջօղլուի մինիստրությունը հենց նույն արտաքին քաղաքականությունը կվարի, ինչ որ Ռեֆիկ Սալթամի կաբինետը. դրան հաստատում կարող է ծառայել իր, Մենեմենջիօղլուի, նշանակումն արտաքին գործերի մինիստրի պոստում, ինչպես նաև պ-րն Սարաջօղլուի հայտարարությունը, որի մեջ վերջինս դիտավորյալ կերպով կրկնում էր՝ բրիտանական դաշինք և գերմանական բարեկամություն՝ արտահայտությունները: Պատասխանելով իմ հարցին, նա ավելացրեց, որ հենց դրանով էլ բացատրվում է Թուրքիայի այսպես կոչված «ակտիվ» չեղորոշությունը ի հակադրություն մեր ինտեգրալ չեղորոշյան: Այս կարգի գործնական չեղորոշությունը, որը հաշվի է առնում տվյալ սիտուացիան, Թուրքիային չի խանգարում իրականացնել դաշինքների քաղաքականությունը, որն իր մեջ ներառում է մշտական «բանակցություններ» այն մյուս երկրների կառավարությունների հետ, որոնք Թուրքիայի հետ դաշնակա-

<sup>1</sup> Ռուսերեն թարգմանությունն արված է գերմաներենից. ֆրանսերեն բնագիրը գերմանական ԱԳՄ գործերում, որոնք գտնվում են Մոսկովյան կառավարության տրամադրության տակ, չի հայտարարված:

ցային կամ բարեկամական հարաբերությունների մեջ են զտնվում:

✓ Թուապատանում իրերի գրության վերաբերյալ իմ հարցին Մենեմենջիօղլուն ասաց, որ, ստացված հաղորդագրությունների համաձայն, Ուկրաինայում հավաքված է նորմալ բերքի 60 տոկոսը, որը, նրա կարծիքով, «հսկայական» է և ավելի կարևոր նրանով, որ «խանձված հողի» քաղաքականությունը ստիպեց էվակուացվել «բերանների» մեծ մասին, որոնց հարկ կլինեի կերակրել: Մյուս կողմից, այն ֆաստը, որ նորերս Մուրմանսկից հյուսիս ջրասուղղ արված տրանսպորտների մեծ մասը սննդամթերքներ էր կրում, վկայում է ռուսական բանակին սպառնացող պարենային ճգնաժամի մասին. միանգամայն ակներև է, որ եթե ստիպողական անհրաժեշտություն չլինեի, ռուսներն անհունորեն արժեքավոր տոննաժը չէին օգտագործի սննդամթերքներ փոխադրելու համար: Մենեմենջիօղլուն ներկա մոմենտում ավելի մեծ նշանակություն է տալիս Ուկրաինայի և Դոնեցի ավազանի արտադրողական ույթների կորստին, քան Իրանի հետ կապը խախտելու սպառնալիքին. իր կողմից նա պնդում է, որ Բասրայի վրայով ամերիկական պարենամթերքի փոխադրումը լոկ սիմվոլիկ նշանակություն ունի: Այսպիսի հանգամանքներում, շարունակեց մինիստրը, այսուհետև կարելի է կատարյալ իրավունքով հուսալ, որ պերմանական բանակն այս ձմեռն իր առջև չի ունենա այն հակառակորդին, որը համարժեք լինեի անցյալ ձմռանն իր դեմը կանդնածին, նույնիսկ եթե հաշվի առնվի ռուսների ունեցած սպառազինության և այրվող նյութի ռեզերվները, ինչպես նաև նոր հանքահորերի շահագործումը: Սակայն այս չի նշանակում, թե եկող աշնանը ռուսական բանակը դուրս կհանվի շարքից: Առայժմ դեռ վաղ է որևէ բան պնդել, քանի որ ամառային արշավանքի ելքը դեռ պարզ չէ. սակայն ժամանակն առաջ է շարժվում, և սեպտեմբերի անձրևներն արդեն խան-

դարում են ռազմական գործողություններին, մյուս կողմից, չպետք է անտես անել, որ «երեքհարյուր» դիվիզիաներ, որոնք ռուսական բանակի հիմնական ուժն են կազմում, մինչև այժմ չեն մասնակցում պատերազմական գործողություններին Կովկասում, որտեղ ներկայումս կռվում են ընդամենը 14 ռուսական դիվիզիա: Այսպիսի հանգամանքներում թուրքական գլխավոր շտաբը դեպի այն տեսակետն է հակվում, որ զերմանական զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը ստիպված կլինի հարձակում մղել ռուսական բանակի հիմնական ուժերի դեմ, եթե միայն նա որոշում չընդունի վճռողական հարված հասցնելը հետաձգել եկող տարվա գարնանը կամ նույնիսկ ամառը: Այս նպատակով կարելի կլինի հարձակում նախաձեռնել Ստալինգրադ-Վոլգա շրջանից հյուսիսային ուղղությամբ: Եթե այս հարձակման հետևանքով գերմանական բանակին հաջողվի սեպ խրել Մոսկվայի և Կույբիշևի միջև, ապա սովետական բանակը «վատ դրություն մեջ» կընկնի: Ինչ վերաբերում է պատերազմական գործողություններին հարավային հատվածում, ապա այս գործողությունների գլխավոր խնդիրներից մեկը, այսինքն—ռուսներին հետ շարտելը Սև ծովի ափից<sup>1</sup>, մոտ է իրականացմանը, չնայած որ անհրաժեշտ է դեռ տիրել Նովորոսիյսկին ու Տուրապսին միայն հետևակի համար մատչելի լեռնանցքների վրայով: Սակայն որքան ավելի հեռու դեպի արևելք, այնքան ավելի դժվար է տիրել այս մատուցներին, և այսպիսով Բաքվի գավթումը լուրջ պրոբլեմ կներկայացնի:

Ապագայի հեռանկարը Մենեմենչիօղլուն թվում է որպես ավելի պակաս դժվար ձմեռային կամպանիա Ռու-

<sup>1</sup> Բնագրում տեքտը, սկսած «ռուսական դիվիզիա» բառերից մինչև «Սև ծովի ափից», լուսանցքներում դժանշված է թանաքի մատիտով և նրա դիմաց գրված է ըստերևույթին նույն ձևերով, ինչ ձևերով որ այս փաստաթղթին կցված ուղեկցող գրութայն վրայի հավելումը: Այս տեսակետն արդեն հայտնի է ուրիշ աղբյուրներից:



սաստանում՝ մեկ կողմից, և հնարավոր գործողություններ  
հզիպտոսի դեմ՝ մյուս կողմից: Նա ինձ հավաստիացրեց,  
թա ինքը համոզված է, որ աշնան վերջը Ռոմմելը նորից  
հարձակման կանցնի, զուգակցելով այն Կիպրոսի և Սի-  
րիայի վրայով աքցանային շրջանման հետ:

Այս կերպ նկարված պատկերը տալիս է թուրքական  
մինիստրի համար կարևոր այն օգուտը, որ Թուրքիային  
թողնում է պատերազմական գործողությունների գոտուց  
դուրս: Թուրքական դիվանագիտությունը միանգամայն ակ-  
ներևորեն շահագրգռված է նրանով, որ առանցքի տերու-  
թյունների ստրատեգիական նպատակները զարգանային  
Մոսկվայի ուղղությամբ և ոչ թե Իրանի և Իրաքի ուղղու-  
թյամբ. նա նաև բոլոր հիմքերն ունի ցանկանալու, որ  
Կիպրոսի կողմից Սիրիայի դեմ կատարվելիք հարձակումը  
դուրս թողնի Անատոլիան ստրատեգիական աքցանի սահ-  
մաններից, որն այս ձմեռը կշրջառի Սուեզը: Պարզ է, որ  
ապագայի նկատմամբ մինիստրի ունեցած հայացքները  
հարկ է դիտել հենց այս գործոնի լույսով:

Այս առաջին գրույցի ժամանակ, որը լուեց 40 րոպե,  
ես ժամանակ շունեցա շոշափելու «երկրորդ ճակատի»  
հարցը: Սակայն ինձ հայտնի է, որ նորերս բուլղարական  
դեսպանորդի հետ ունեցած գրույցի ժամանակ պ-րն Մենե-  
մենշիօղլուն այսպիսի ձեռնարկությունն անվանել է «զրդ-  
յելի կատակ»: Իսկ բելգիական դեսպանորդի հետ ունեցած  
գրույցի ժամանակ Մենեմենշիօղլուն, ընդհակառակը, է՛լ  
ավելի մեծ համոզվածությամբ, քան մեր խոսակցության  
ժամանակ, խոսել է ռուսական բանակների դեռ չխոր-  
տակված ուլթի մասին, լոկ հարևանցիորեն հիշատակելով  
Ուկրաինայի բերրի մասին: Ակներևորեն սրանում կարելի  
է նկատել լոկ քաղաքավարի ղգուշության երանգներ:

Հունական դեսպանորդը, որին ես այց տվի, մեծ նշա-  
նակություն է տալիս անձեռնմխելի մնացած ռուսական 300  
դիվիզիաներին: Նա հաշվում է, որ կորցված նավթային  
ոսյոնները տալիս էին նավթի հանույթի 25 տոկոսից ոչ

ապելին, այն ինչ Ուրալում գտնվող աղբյուրների շահագործումն «անսպասելի արդյունքների» հասցրեց: Դեռ սկսած Նորդը համաձայն չէ այն կարծիքին, թե այս աշնանը գերմանական բանակին կհաջողվի հասնել մինչև Բաքու, և ընդամին մատնանշում է, թե Բաքվի նավթը կարող է դուրս տարվել Կրասնովոդսկի կայարանը, որտեղից գնում է Տրանսսիբիրյան երկաթուղու ճյուղը:

[illegible]

ըստինքյան հասկանալի է, իմ ուղեորութեան մասին էլ մէկ ինձ առիթ տվեց, սկզբում պատմելով մեզ մօտ տիրող կարգի մասին և գովասանք մատուցելով մեր բնակչության հրաշալի վարքագծին, ասել նրան այն անհանգրստութեան մասին, որ Դաշնակցային խորհրդին պատճառում է գաղթականների հարցը: Ի հակադրութեան մեր առաջվա զրույցների հսկողացաւ հավաստել գերմանական դիմադրութեան առաջիկա կրախի նկատմամբ արվող սովորական ակնարկների բացակայութիւնը: Ընդհակառակը, դեսպանն ինձ հայտարարեց, թէ ինքը հակված է հավաստել թուրքերի հաղորդագրութիւններին այն մասին, թէ առանցքի տերութիւնները, թերեւ, կ'աւտերազմեն դարձյալ «մեկ, իսկ կարող է պատահել և երկու տարի»:

Իմ վերադարձի ճանապարհը՝ Իտալիայի, Բելգրադի և Սոֆիայի վրայով, անցավ առանց որեւէ միջադեպի, և ես չէի կարող նախատեսել, թէ ճանապարհի հենց այս հատվածում մեր յուրահանդակի վրա հարձակում տեղի կ'ունենա: Իսկին Հարավսլավիայի իտալական տերիտորիայի վրա (Պոստոմիա-Լյուբլյանա) մի հատված գտնվում էր ուժեղ պահպանութեան տակ. մոտավորապես յուրաքանչյուր 200 մետրից հետո խրամատներում տեղավորված էր պահպանական պոստ. ճանապարհի ամբողջ հատվածում շինված էին ժամանակավոր ամրութիւններ՝ արհեստական կառուցվածքների (կամուրջների, թունելների և այլնի) պաշտպանութեան համար: Այս ժամանակավոր բարակների պատերի մէջ կային հրակնատներ. իրենք պատերը շինված էին կրկնաշորք գերաններից, որոնց միջև կար քարերից շինված միջնառէրտ. այս աշխատանքներից շատերը դեռ կատարվում էին: Մուտքերը պաշտպանված էին լաբավակոցներով, որոնք փակում էին արհեստական կառուցվածքների և այլ, ըստերևութիւն հարվածի տակ գտնվող, գոտիների մատուցները: Այս հատվածի երկու կողմից ձգվում էր մի անտառ, որն այդտեղ շատ խիտ էր. և մոտավորապես 100 մետր տարածութեամբ կտրատված էր կամ նախա-



դասինըլան հասկանալի է, իմ ուղեորության մասին էլ  
լինել ինձ առկա տվեց, սկզբում պատմելով մեզ մոտ տե-  
րող կարգի մասին և զովասանք մատուցելով մեր բնակ-  
չության հարաշախ վարքագծին, ասել նրան ախ անհա-  
պրատություն մասին, որ Դաշնակցախի խորհրդին պատ-  
հասում է զազմականների հարցը, ի հակադրության մեր  
առաջին զրույցներին ևս կարողացա հավաստել զերմանա-  
կան ղեկադրության առաջիկա կրտսեր նկատմամբ արդող  
սովորական անկանխելի բացակայությունը։ Ընդհակա-  
ռակը, ընթացան ինձ հաջաբարեց, քե ինքը հակված է  
հավատալ թուրքերի հաղորդադրություններին ար մասին,  
քե առանցքի աերությունները, քերակ, կպատերազմեն զար-  
ծալ ժնին, իսկ կարող է պատահել և երկու տարին։

Իմ վերադարձին Հանապարհը՝ Բալխանի, Բելգրադի և Յուգոսլավի վրայով, անցավ առանց որևէ միջադեպի, և ես էլի կարող եմ հասնալ, թե՛ Հանապարհի հենց այս հատվածում մեր Խորհրդային ժողով հարձակում տեղի կունենանա, իսկ ինչի Հարավսլավիայի իտալական տերիտորիայի վրա (Պոստոլմինա-Կլեյլյանա) մի հատված գտնվում էր ուժեղ պահպանված ապ. մոտավորապես լուրջաբանչուր 200 մետրից հեռու խրամատներում անընդհատ էր պահպանված պատ. հանապարհի ամբողջ հատվածում շինված էին ժամանակավոր ամբուկուլներ՝ արհեստական կառուցվածքների (կամուրջների, թունելների և այլն) պաշտպանության համար։ Այս ժամանակավոր բարակների պատերի մեջ կտրին հրակոսներ։ Իրենք պատերը շինված էին կրկնաշար գերաններից, որոնց միջև կար բարերից լինված միջնորդիտ. այս աշխատանքներից շատերը դեռ կատարվում էին։ Մուտքերը պաշտպանված էին լարակապ կոցներով, որոնք վաղուց էին արհեստական կառուցվածքների և այլ, բետոնուլիթի հարվածի առկա գտնվող, գոտիների և այլ, բետոնուլիթի հարվածի առկա գտնվող, գոտիների մասնալցները։ Այս հատվածի երկու կողմից ձգվում էր մի անառտ, որն այդտեղ շատ խիտ էր և մոտավորապես 100 մետր տարածությանը կտրադատված էր կամ նախա-

[illegible]

տեսված էր կտրելու համար: Ճանապարհորդության ժամանակ ղորամասը դրավեց գնացքը և գլխավորապես իմ վագոնը: Նախադրուշության այս միջոցները վերացված էին, ըստերևույթին, գերմանացիների գրաված հատվածում (Լյուբլյանա-Ջագրեբ), ինչպես նաև ճանապարհի խորվաթական հատվածում (Չագրեբ-Բելգրադ), գոնե աջնամյան շրջաններում, որոնց վրայով մենք անցանք ցերեկով: Պրանք վերակավեցին Բելգրադից այն կողմը, որտեղ նորից երեացին նաև ամրություններ, այս անգամ ավելի հին տիպի շատ պատկանելի կաղմվածքների ձևով (աղյուսից և քարից, լուսարձակներով): Ծառայությունը կատարում են մեծ մասամբ բուլղարական ղորամասերը, բացյալ պահանական պոստերը զգալիորեն ավելի սակավ են դոստավորված: Սերբիայում և Բուլղարիայում իմ գնացքն (բացառությամբ քնելու վագոններից) այնքան լեփլեցուն էր, որ միջանցքներով չէր կարելի ազատորեն անցնել: ավելի լավ էր բոլորովին դուրս չգալ կուպեից: Ինչ վերաբերում է կայարաններին, ապա, օրինակ, Միլանի կայարանը, որտեղ ժողովրդի բազմությունը բուռն կերպով առաջ է նետվում կամ ամբողջ գիշերները կատարյալ խավարի մեջ հազվագյուտ գնացքների է սպասում, անտեղյակների վրա շատ անախորժ տպավորություն է թողնում: Սակայն, ուրիշ վայրերում և առանձնապես Բալկաններում, որտեղ ուղղա-ոստիկանական ծառայությունը կատարում են գերմանական և ուրիշ սլավոնական պոստերը, ես նման խռնում (կայարանների) չնկատեցի: Ըստերևույթին, բազմաթիվներ չեն նկատվում: Սոֆիայից ոչ հեռու մեր հանդեպ էր գալիս մի գնացք, որը, ինչպես ինձ թվաց, փոխադրում էր գերմանական ռազմական մոտոբացված տրանսպորտային շարասյուն (ավտոմոբիլներ, բեռնատար ավտոմոբիլներ, մոտոցիկլեր): Ամբողջ տրանսպորտային նյութը կոտրտված էր, փոշոտված և, ըստերևույթին, ծանր փորձություններ էր կրել: Զինվորները, երիտասարդ գերմանացիներ, կայաառությամբ լի, հագել էին համազգեստներ,

սրտնք պահւած էին կարգին, բայց սաստիկ քրքրւած: Պ-րն  
մայոր Յրիկը, որը հենց նոր ժամանեց և մասամբ անցել  
էր նույն ճանապարհով, իր ճանապարհորդական դիտողու-  
թյուններն ավելի մանրամասն կշարադրի տեխնիկական  
հաշիվետությունում:



սրունք պահված էին կարգին, բայց սաստիկ քրքրված: Պ-ըն  
մայրը Ֆրիկը, որը հենց նոր ժամանեց և մասամբ անցել  
էր նույն ճանապարհով, իր ճանապարհորդական դիտողու-  
թյուններն ավելի մանրամասն կշարադրի տեխնիկական  
հաշվետվութլունում:

ՌԻԲԲԵՆՏՐՈՊԸ — ԳԵՎԵԼ-ՎԵՐՎՈԼՖԻՆ<sup>1</sup>

Գ ա ղ Տ Ե Ի

ՀԵՌԱԳԻՐ

Ֆուշի, 12 սեպտեմբերի 1942 թ. 16 ժ. 30 ր.  
Ստացված է 12 սեպտեմբերի 1942 թ. 17 ժ. 25 ր.  
№ 1104

Հանձնված է № 179-ով դեսպանորդ  
Գեվել-Վերվոլֆին 12 սեպտեմբերի 1942 թ.

Դեսպանորդ Գեվել-Վերվոլֆի համար  
Տեղեկանք ֆյուրերի համար

Անկարայի դեսպան ֆոն Պապենի ուղարկած հաշվե-  
առվությունները Սովետական Միության Բյուրքական ժո-  
ղովուրդների առթիվ Բուրքական պրեմյեր-մինիստրի և  
Բուրքական արտաքին գործերի մինիստրի հետ նրա ունե-  
ցած զրույցների մասին ինձ դրդեցին կազմել կցվող հե-  
ռագրային ցուցումը դեսպան ֆոն Պապենին, որով նրան  
առաջադրվում է լիակատար զսպվածություն հանդես բե-  
րել այս հարցում: Ինչպես ինձ հաղորդում է դեսպանորդ  
Գեվելը, այս հաշվետվությունները ֆյուրերին միտք ներ-  
շնչեցին կանչել դեսպան ֆոն Պապենին այն նպատակով,  
որպեսզի նրան բանավոր ցուցումներ տրվեն՝ նման գոր-  
ծերում ավելի մեծ զսպվածություն հանդես բերելու և  
անժամանակյա խոսակցություններ չբանալու: Ես կարծում  
եմ, թե կցվող հեռագրական ցուցումով, որը դեռ չի ու-

<sup>1</sup> Բնագրի առաջին էջի վրա կա Վերմանի ինիցիալը:

Telegraph 1. 9. - Schreiber 2.

Postl. den 12. September 1942

16.30 Uhr

Ankunft des 12. September 1942

17.05 Uhr

W 7230

10.9.42.

Fr. 1104 von 12.9.

Yarnak.

Unter Nr. 179 an  
Gen. Navel-Mehroff  
weitergegeben.  
12.9.42

1. 1. Telks

2. 1. Fernschreiben

Für General Navel-Mehroff.

Notiz für den Führer.

Die Berichte des Botschafters von Japan aus Ankara über seine Gespräche mit dem türkischen Ministerpräsidenten und dem türkischen Außenminister wegen der türkischen Völker in der Sowjetunion haben sich veranlaßt, den enligenden Drathorles an Botschafter von Japan abzufahren in den Botschafter die Beobachtung völliger Zurückhaltung in dieser Frage vorgeschrieben wird. Wie wir General Navel meldet, haben diese Berichte den Führer den Gedanken nahegelegt, Botschafter von Japan können so late sein, damit ihn ähnlich gesagt werden kann, er solle sich in diesen Dingen stärker zurückhalten und keine Doppelgespräche aufnehmen. Ich möchte glauben, dass mit dem beiliegenden Drathorles, das noch nicht abgegangen ist, bereits die erforderliche Grenze geschaffen werden kann, dass Herr von Japan das Thema in Ankara nicht weiter verfolgt. Würde ich Botschafter von Japan jetzt hierher kommen lassen, so würde vermutlich bei der Publizität, die die Reisen des Herrn von Japan zweifelslos in der internationalen Presse selbst finden, noch ausser leicht der gegenteilige Eindruck sich ergeben können, als ständen wir in Begriff mit der türkischen Regierung in unsere Stellung zu treten, wobei angesichts der Kriegslage allgemein vermutet werden wird, dass dies wohl mit unseren Beziehungen zu Ankara und den türkischen Völkern

Das ist Z...



դարեկված, անհրաժեշտ երաշխիք կստեղծվի այն բանի համար, որ սլարոն Պապենը չի սկսի հետազայում երկայնաբանել այս թեմայի մասին Անկարայում: Եթե ես այժմ դեսպան ֆոն Պապենին այստեղ կանչեի, ապա, հավանորեն, այն անցանկալի հրապարակայնությունը, որին մատնվում են ֆոն Պապենի ուղևորությունները միջազգային մամուլում, կկարողանար հեշտություն մտեղծել այն տպավորությունը, թե մենք դիտավորություն ունենք թուրքական կառավարության հետ ավելի սերտ կոնտակտի մեջ մտնելու, բոտորում, հաշվի առնելով ռազմական իրադրությունը, ամենքը կենթադրեն, որ սա, հավանորեն, կապված է Կովկասում մեր գործողությունների հետ և այդ մարզերի ապագա վիճակի հետ:

Եթե ֆյուրերը սրան համաձայն է, ես շարադրվածք նկատի առնելով, կառնջարկեի կցվող հրահանգն ուղարկել սլարոն ֆոն Պապենին: Եթե ֆյուրերը ցանկանա, որ ես այնուամենայնիվ սլարոն ֆոն Պապենին կանչեմ այստեղ, որպեսզի նրա հետ ինչպես այս, այնպես էլ մյուս հարցերը քննարկենք, ապա ես շնորհակալ կլինեի ցուցումների համար:

Փուշ, 12 սեպտեմբերի 1942 թ.

Ֆյուրերի համար կազմված տեղեկանքի վերջը  
Այնուհետև՝ հեռագրի նախագիծը

Գերմանական դեսպանությանը Անկարայում

Գ ա դ Տ Ե Ի

Անձամբ դեսպանին

Ինչպես երևում է օգոստոսի 26-ի և 28-ի Ձեր հեռագրերից, ինչպես նաև օգոստոսի 27-ի Ձեր էլեկուցադրից, թուրքական պետական գործիչների հետ ունեցած Ձեր վերջին զրույցներում բազմիցս շոշափվել է Կովկասում, ինչպես նաև սովետա-ռուսական մյուս մարզերում ապրող թուրքական ժողովուրդների վերաբերմամբ թուրքական

շահերի թեման և ընդամին նաև քննարկվել է, թե Թուրքիան  
ինչ եղանակով կկարողանար աջակցել զրա հետ կապված  
հարցերի լուծմանը: Ինչպես պարոն Նումանը, այնպես էլ  
պարոն Սարաջօղլուն այս դեպքն օգտագործեցին, որպեսզի  
ընդգծեն թուրքական շահագրգռվածությունն այդ գործերով  
և հայտարարեն Թուրքիայի ցանկությունների ու պահանջ-  
ների մասին, ավելացնելով զրան մի քիչ մշուշապատ ձե-  
վով արված առաջարկ՝ իրենց խորհրդով զաղտնաբար կամ  
երրորդ անձնավորության միջոցով մեզ աջակցություն ցույց  
տալու մասին. միևնույն ժամանակ նրանք նորից համա-  
